

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԱՏՆՈՒԱԾ

Կ. Պոլսէն կը հաղորդուի թէ Պատրիարքարանը սկըզբունքով ընդուներ է Կիլիկիոյ Կաթողիկոսին ընտրութիւնը սրբազրուած, այսինքն՝ սրբապղծուած, ցուցակի մը մէջէն կատարել տալ։ Երջտզին պիտի հաղորդուի անուններն այն բոլոր եպիսկոպոսներուն որոնք ընտրողական ժողովէն Կիլիկիոյ տան կրօնական վեհապետութեանը կրնան կոչուիլ, սուլթանը անոնցմէ պիտի ջնջէ իրեն անհաճոյ երեցածները։ Մեր կրօնքին ժահացու թշնամի դեմի մը պետն է ուրեմն որ մեր եկեղեցին այսուհետև իր գերիշխանութեանը ներքեւ անսելով պիտի որոշէ անոր հովուապետութեան կոչուելու արժանաւորներն ու անարժանները։ Չամիչեան Բարթողիմէոս, Դերձակեան Արիստակէս, Սուբիասեան Մեսրոբ, Օրմանեան Մաղաքիա եպիսկոպոսները ա՛լ ասկէ ետքը իրենց առջև բաց ասպարէզ ունին։ «Հաւատարիմ ծառան իր վարձքին արժանի է։» Այն եկեղեցականները որոնք մաքրակենցաղ բարոյականով ու շքեղանքով ազգասիրութեամբ ծառայած են իրենց ազգին, ա՛լ կարող պիտի չըլլան Եկեղեցիին մեծագոյն պաշտօններուն մէջ օգտակար հանդիսանալ հայ ժողովրդին։ Սուլթանը իրեն մատուցուած ցուցակէն պիտի անհետացնէ ու է անուն որ հայ Եկեղեցիին հաւատարմութեան գրաւական մը կ'ընծայէ։

Տարակոյտ չունենանք որ հայ ազգին կրօնասիրական խղճմտանքին տրուած այս հաստոյր հարուածը ուժգնօրէն պիտի կրկնուի և Պոլիս Պատրիարքարանի գլխուն։ Սուլթանը Սահմանադրութեան վերաքննութիւնը պահանջելով կուզէ ջնջել ի սիջի այլոց նաև անկախօրէն պատրիարք ընտրելու իրաւունքնիս ալ։ Օրմանեան պատրիարք և վարչապետ Արթին փաշա, Երջտզին բացատրեցին թէ անհրաժեշտ հարկ մը չի կար մտքեր յուզել Սահմանադրութեան վերաքննութեամբ։ Քաղաքագիտական վարպետութեամբ կարելի էր Սահմանադրութիւնը ջնջել առանց աղմուկի, և աւելի ապահովութեամբ։ Հետզհետէ ներկայացած առիթներով պէտք էր մէկիկ մէկիկ ազգէն

խել եկեղեցական այն բոլոր իրաւունքները որոնք սուլթանին անհաճոյ կը թուէին։ Տարիներու ընթացքին մէջ կարելի էր ստեղծել նոր կացութիւն մը որուն կըրնար ընտելանար հայ ժողովուրդը անզգալապէս. սե այն օրը որ Սահմանադրութիւնը վերաքննութեամբ ջնջուի, հայ ազգը խրաշուժի ու է շարժառիթի հանդէպ պիտի չգտնուի։

Օրմանեանի և Տատեանի ծրագիրը յանձնարարելի էր անցեալի յիշողութեամբ։ Սահմանադրութիւնը զոր ունինք ուրիշ բան չէ եղած բայց եթէ ի վաղուց անտի հայ ազգին թիրքիոյ մէջ վայելած եկեղեցական իրաւունքներուն պաշտօնական ամփոփումը։ Սահմանադրութեան խմբագիրները տետրակի մը մէջ հաւաքեցին այն բոլոր իրաւունքները որոնք աւանդութեամբ, սովորութեամբ, սուլթաններու ֆերմաններով ազգին ձեռքը կը գտնուէին 1860ին։ Ասկէ ետքը երբ պատրաստուի նոր կացութիւն մը, որուն վարժուի ազգը կամաց կամաց, տարակոյտ չի կայ թէ նոր սահմանադրութիւն մը խմբագրուած պահուն ժամանակին ժողովականները ընելիք ուրիշ բան պիտի չունենան բայց եթէ յօդուած յօդուած բաժնել և արձանագրել ինչ որ ազգին ձեռքը իրաւունք կը տեսնեն։ Ազգը զիտողութիւն պիտի չկըրնայ ընել երբ կը գտնուի կատարուած գործողութեան մը հանդէպ։

Սուլթանին մեծ իղձն էր որ թէ՛ Կ. Պոլսոյ պատրիարքը, թէ՛ Կիլիկիոյ և Աղթմարի կաթողիկոսները, թէ՛ բոլոր առաջնորդները ընտրուին սրբազրուած ցուցակի մը մէջէն։ Իրաւ է որ օսմանեան իշխանութիւնը ընտրութեանց վաւերացման կամ բեկանումի իրաւունքը կը վայելէ, բայց սուլթանը կը զժկամակի ջնջել կատարուած գործողութիւն մը, չուզելով յայտնել թէ հայ եկեղեցական մը կրնայ Խալիֆ-սուլթանին վախ ազդել։ Սակայն իր նպատակին կը հասնի անուղղակի միջոցներով։ Օրմանեան-Տատեանին նենգաւորութեամբ բեկանել տուաւ, առանց ինքը միջամտելու, Ալէքսանդրի Գրիգորի եպիսկոպոսին կաթողիկոսական, և Իզմիրեան Մատթէոս պատրիարքին՝ առաջնորդական ընտրութիւնները։ Ազգին իրաւունքները ազգին ձեռքովը կը ջախջախէ։ Սրբազրուած ցանկի գրութիւնը այլ եւս ծամածուռ միջոցներու հարկ չթողուր։ Երբ հիմակ դարաւոր իրաւունք մը կը

խորտակուի Կիլիկիայով կրնայ մտաբերել թէ այդ միևնոյն իրաւունքը անվտանգ պիտի մնայ Կ. Պոլսոյ պատրիարքական ընտրութեան պարագային: Պատրիարքը շատ աւելի մեծ զօրութիւն մը կը ներկայացնէ քան թէ Կիլիկիոյ կաթողիկոսը, հետևաբար սուլթանը այդ ուժն իսկ է որ կուզէ ջախջախել:

\* \* \*

Դաւաճանութիւնը որով Օրմանեան Մաղաքիա պատրիարք եւ Տատեան Արթին վարչապետ հայ եկեղեցին կը մատնեն մահապատիւնութեան ձեռքը, ամենածանր վրտանգներ կը սպառնայ հայ եկեղեցականութեան ազգային հոգիին: Օրմանեաններ, Բարթողիմէոսներ, Դերձակեաններ, Մեսրոբներ պիտի ծնին միայն ասկէ ետքը, վասն զի ապագան անոնցն է:

Տասը տարիէ ի վեր հայ ազգին եւ օսմանեան իշխանութան միջեւ մղուած պատերազմը երկու խումբի բաժնեց եւ հայեկեղեցականներն ալ. մէկը՝ ազգին, միւսը՝ Դրան յարած: Ու զիտելի էր որ իրենց պակշտական վարք ու բարքովը ծանօթներն էին ընդհանրապէս օր մահապատիւնութեան կը յարէին: Բնական էր որ հայ ազգը իրենները բռնէր. և տեսանք թէ Խրիմեան՝ Կաթողիկոս Հայոց, Իզմիրեան՝ պատրիարք Թիւրքիոյ Հայոց, Ալէքսանդրեան՝ Կաթողիկոս Կիլիկիոյ ընտրուեցան ազգին կողմէն: Իսկ մահապատիւնները միշտ իբր մեղաւորներ «առ զրունս» մնացին. միշտ գաւիթը, երբե՛ք տաճարէն ներս: Իրաւ է որ Օրմանեան մը պատրիարքութեան կոչուեցաւ, բայց ահեղ ժամանակ մըն էր, ու այդ եկեղեցականը որ որոշ գոյն մը չունէր, մինչեւ աստիճան մը Ներսէս պատրիարքին քաղաքական ձեռնասունը կը համարուէր:

Այսպէս ահա սուլթանը իր բոլոր ուժովը անկարող կ'ըլլար իրեն սպասարկու եկեղեցականները ազգին բարձրագոյն պաշտօններուն կաշի տալ, ազգը Եկեղեցիին սըրբազանագոյն տիտղոսները իրեններուն մենաշնորհը հռչակելով: Օրմանեան-Տատեան դաւադրութեամբ ասկէ ետքը «առ զրունս» կեցողները ազգին եկեղեցականները պիտի ըլլան. սուլթանը իր սրբապղծած ցուցակին մէջ պիտի թողու այն անունները որոնք իրենց մահապատիւն անցեալով վստահութեան ամէն երաշխաւորութիւն կ'ընծային:

Հայ եկեղեցականութեան համար կը պատրաստուի նոր ապագայ մը, վտանգներով սպառնալից, և որուն վրայ խօսելու համար պէտք եղած ձեռնհասութիւնը ոչ ոք ունի, վասն զի եզական նորութեան մը հանդէպ կը գտնուինք: Մինչեւ այսօր հայ ժողովուրդը իր եկեղեցիին, հետևաբար և իր եկեղեցականութեան բացարձակ տէրն էր. արժանաւորն ու անալիքը որոշելու իշխանութիւնը ինքն ունէր. ժողովուրդը կը սխալէր-կամ ոչ, այդ մեր զիտնալու բանն էր:

Ինչ պիտի ընէ հայ ժողովուրդը երբ հիմակ մահմետականութեան ղենպետն է որ հայ եկեղեցիին պաշտօններուն գերագոյն բաշխիչը կը հռչակուի: Ինչ պիտի ընենք մեր անբռնաբարելի իրաւունքներուն պաշտպանութեանը համար: Ինչ պիտի ընենք որ հայ եկեղեցականութիւնը սրտով մահմետականալու փորձութեան մէջ չ'իյնայ:

Այս հարցումները ազգին առջեւ կը դրուին, և արտասահմանի Հայոց վրայ պարտականութիւն կը ծանրանայ ամենալուրջ կերպով խորհելու:

Թիւրքիոյ մէջ գտնուող քրիստոնէայ ժողովուրդներէն իւրաքանչիւրին յատուկ կազմակերպութիւնը և վայելած առանձնաշնորհումները երաշխաւորեալ են միջազգային դաշնագրութիւններով: Հայոց իրաւունքները միջազգային պաշտպանութեան զուրս նաև հաստատուած են սահմանադրութեամբ որ ազգին եւ օսմանեան իշխանութեան միջեւ պայմանագրութիւն մըն է, տեսակ մը Քօնքորտա, ինչպէս Կաթողիկ եկեղեցին ու Փրանսական իշխանութիւնը կնքած են: Եւ ասոնցմէ զատ, 1895 մայիս 11ի բարենսրոգումներու ծրագիրը զոր Ֆրանսա, Անգլիա և Ռուսիա ներկայացուցին սուլթանին, եւ զըլխաւոր կէտերուն մէջ ընդունել տուին, բացարձակօրէն կը արամադրէ մեր բոլոր հնաւանդ իրաւունքներուն անվճար պահպանումը:

Եւրոպա ու Ամերիկա գտնուող հայոց պարտականութիւնն է ուժեղապէս բողոքի ձայն բարձրացնել Օրմանեան-Տատեան դաւադրութեան զէմ, և օգտուելով այն ազատութենէն զոր կը վայելեն, յանուն հայ ազգին մերժել մահապատիւնութեան ո՛ր եւ է ոտնձգումը հայ եկեղեցիին մէջ:

Ամերիկա գումարուած Համաժողովը որու մասին մեր նախորդ թուով ընդարձակօրէն խօսեցանք, ընտրած է յանձնախումբ մը որ կարգ մը տնօրինութիւններ պիտի ընէ: Այդ մարմինը կրնայ հարկ եղած նախապատրաստութիւնները տեսնել, որպէս զի պաշտօնական կազմակերպութեամբ մը արտասահմանի հայութիւնը բողոքէ Կ. Պոլսոյ Պատրիարքարանին դաւադրութեանը զէմ: Հարկ է ծանր, լուրջ ընթացքով մը Եւրոպայի առջեւ հանդիտաւորապէս պաշտպանել մեր այն բոլոր իրաւունքները որոնք պետութեանց երաշխաւորութեանը ներքե կը գտնուին, և զորս սուլթանը հետզհետէ կը կորզէ, կ'ոչնչացնէ:

### ԱՐԱՐԱՏ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Պ. Լեւոն Սարգսեանց սր իբր ուսուցիչ եւ իբր հրապարակագիր հանրածանօթ է Ռուսաստան, այս օրերս «Հին ցաւ» անունին տակ առանձին գրքոյկով տպագրեց մէկ քանին այն յօդուածներէն զոր 1895-98ին Մշակի մէջ հրատարակած էր: Տետրակին անունը պէտք է ենթադրել տայ թէ հեղինակը կրօնական ու եկեղեցական խնդիրներով կը զբաղի: Ո՛չ ապաքէն մեր հնագոյն ցաւը կրօնականն է, որուն երեսուր պատմութեան անյիշատակ ժամանակներէն հարկ է թուագրել: Բայց Ասիոյ ու Եւրոպայի «հին ցան» ալ միթէ միեւնոյնը չէ՞: Պատերազմը զոր այս պահուս իսկ հանրապետական Ֆրանսան կրօնաւորական միաբանութեանց դէմ կը մղէ, նոր ապացոյց մըն է թէ Ֆրանսան իսկ տակաւին կը տառապի այն «հին ցաւ»ով որմէն եւ ոչ իսկ իր Մեծ Յեղափոխութիւնը կրցաւ զինքը բուժել:

Բայց Պ. Սարգսեանց հակակրօնական և հակաեկեղեցական բժշկարան մը չէ որ կը նուիրէ: Ինքն ալ քաջ ըմբռնած է, ինչպէս ուրիշներ, թէ այն քաղաքական պայմանները որոնցմէ հայ ազգը շրջապատեալ է, անոր չեն թոյլատրեր մտքի անկախ ազատախոհութիւն: Մենք կը նմանինք բերդաքաղաքի մը մէջ պաշարուած ժողովրդի մը որուն մեծ վտանգ կը սպառնայ լայնատարած գաշտերը սուրբալով ազատ օդ շնչելու անհամբերութիւնը, երբ տակաւին թշնամին իր պարիսպներուն շրջակաները զարանակալ կը մնայ իրեն:

Պ. Սարգսեանց պահպանողական նպատակ մը առաջադրած է՝ հայ եկեղեցականութեան բարձրացումը, շնորհիւ անկողմնակալ եւ բարեացակամ քննադատութեան: Երբ այդ տետրակը ուշադիր կը կարդանք կը համոզուինք թէ հեղինակը ձեռքը կացին մը չէ բռնած, այլ՝ նշլարակ սը որսով կը ջանայ վիրաւոր մարմնի մը փտած մասերը կտրել, որպէս զի ամբողջ իրանը իր քաջաողջութիւնը գտնէ:

Հրապարակագրին տեսութեանցը համամիտ գտնուինք կամ ոչ, բայց կ'ընդունինք թէ սեղմ ու ամփոփ ծրագրով մը մեզի կը ներկայացնէ հայ եկեղեցականութեան շուրջը յուզուած բոլոր խնդիրները: «Հին ցաւ»ին վեց յօդուածներէն իւրաքանչիւրը ամբողջ հատորի մը նիւթերուն խտացումը կը թուի:

Այդ յօդուածներուն ուշադիր ընթերցումէն կը համոզուինք թէ Ռուսաստանի հայերը տակաւին չեն հառած այն բարձրութեան որ իրենց հնարաւոր ընէ եկեղեցական մարմինը յատուկ սպասարկութեան մը սահմանուած պաշտօնէութիւն նկատել, ուրիշ ոչինչ: Եկեղեցականները կովկասի Հայոց համար ալ, ու անոնց հա-

մար թերեւ ալ աւելի քան մեզի համար, հանրութեան զարգացմանն ու բարոյացումին սատարներէն կը համարուին: Հոն ալ մամուլը դեռ ժողովրդին ամէն խաւերուն վրայ չ'ազդեր. ուսեալ աշխարհականները անզօր են, կամ չեն ուզեր, հասարակութեան առաջնորդել:

Արարատ-կովկասեան Հայոց ազգային կեանքը ուսումնասիրել փափագողներուն, Պ. Սարգսեանցի տետրակը առաջնորդ մըն հեազօտութեանց ծրագրի մը պատրաստութեանը համար: Այս էջերուն մէջ օրէ օր աւելի ընդարձակ բաժին մը կը նուիրուի Ռուսաստանի Հայոց ներկայ թէ տնցեալ հանրային կեանքին: Բայց միշտ այն խորին համոզումով թէ Ռուսիոյ Հայոց բոլոր ըզձանքները կրօնական ու գրական շրջանակի մը մէջ պարփակուած կը մնան, ու պէտք է մնան: Ու է քաղաքական ձգտում մեր մտքին չի հպիր, վասն զի Ռուսիոյ մէջ հայ մը չի կայ որ տաղնապի այդ օրինակ մտատանջութեամբ մը: Կը գտնուինք հանդէպ իրականութեան մը որուն համոզմամբ համակերպուած են Ռուսիոյ Հայոց հետ նաև աշխարհիս բոլոր հայերը: Արարատ-կովկասի հայերը այսօր գրեթէ կը գտնուին այն վիճակին մէջ ուր էինք մենք, թրքահպատակ հայերս, վերջացած դարուն առաջին կէսէն առաջ: Եկեղեցի ու գիրք, ահա մինչեւ 1850 հայ ազգայնութեան էութիւնը թիրաքիոյ մէջ. գիրք ու Եկեղեցի, ահա՛ ինչ որ 1901ին Ռուսիոյ Հայոց ամբողջ ազգային կեանքը կը կազմէ: Ու այդ կեանքը այնքան սերտ յարաբերութիւն ունի մերինին հետ որ երբ անով կ'զբաղինք, միեւնոյն ժամանակ ուղղակի մեզի շահագրգռող շատ խնդիրներով զբաղած կ'ըլլանք:

\* \* \*

Կրօնական խնդիրներու մէջ, սր իրենց համար մտաւորական ու ազգային խնդիրներ են, Ռուսիոյ հայերը երկու կուսակցութեան բաժնուած են, բայց քիչ մը աւելի ուշադրութիւն, կամ փնտոտուց, երրորդի մը գոյութիւնն ալ կը հաւաստէ:

Այդ կուսակցութեանց մէկը պահպանողական կը կոչուի, միւսը՝ յառաջդիմական: Առաջինը պիտի կրնայինք «կրօնամուրական» ալ անուանել, եթէ երբեք հայը կարենար համոզմամբ հաւատացեալ կրօնամուլ մը ըլլալ ինչպէս Ֆրանսացի մը, Անգլիացի մը, Յոյն մը: Պահպանողական ու յառաջդիմական, երկուքն ալ հաւասարապէս, հաւատքի մտահոգութիւններով չէ որ կը տառապին: Պահպանողական ու յառաջդիմական իրարմէ կը զանազանին եկեղեցագործ օրէնքներու բարեփոխման, եկեղեցական պաշտօնեաներու վերաբերող խնդիրներու տեսութեանց մէջ: Պահպանողականները կը յայտարարեն թէ եկեղեցիին հնաւանդ օրէնքները անփոփոխելի են, եկեղեցական կազմակերպութիւնը անձեռնմխելի պէտք է

մայ, ու լուսաւորչական եկեղեցին Հայութեան կեդրոնն է: Յառաջդիմականները առանց եկեղեցին վարդապետութեանցը հպելու, զորս անփոփոխ պահել կ'ուզեն, կը հետամտին որ մեր հին կրօնական օրէնքներուն՝ որոնք մեր ընթացիկ կեանքին համար սահմանուած են՝ բարեփոխումին արդի ժամանակին պահանջուններուն համաձայն: Իրենց ծրագրին մաս կը կազմէ նաև՝ ազգին խօտապահանջ հսկողութեամբ ու քննադատութեամբ եկեղեցական մարմին առաքինացումը:

Երբորդ կուսակցութիւնը դեռ անուն մը չունի, եւ ազգէն պաշտօնապէս չէ ճանչցուած, բայց անոր գոյութիւնը կը հաստատուի նոյն իսկ «Հին ցաւ»ին մէջ: Այդ կուսակցութեան պատկանողները առժամաբար Համա-մարդկայիններ կ'անուանենք: Ասոնք ուղղակի յառաջդիմականներն սերած են: Պահպանողականութիւնը որոշ սահմանազուտներու մէջ կը մնայ: Յառաջդիմութիւնը չի կրնար յառաջդիմութիւն համարուիլ, եթէ երբեք վերջակէտի մը հասնիլ ուզէ: Համա-մարդկայինները յառաջդիմականներուն ծնունդն են. սկզբունքով հակառակորդ են թէ՛ պահպանողական, թէ՛ յառաջդիմական կուսակցութեանց, վասն զի երկուքն ալ կը դառնան կրօնքի, եկեղեցիի, հաւատքի շուրջը: Ճշմարիտ յառաջդիմութիւնը կրօնքի գաղափարին անհաշտ թշնամին կը համարին: Ազգութեան շահերը երբեք նկատողութեան առնել չեն յօժարիր, վասն զի Ազգութեան գաղափարն ալ հակա-յառաջդիմական նախապաշարուած մըն է: Ընդհանուր մարդկութիւն կը ճանչնան միայն, առանց ազգային խտրութեան. անոր համար Համա-մարդկային կրնանք համարիլ զիրենք:

Պահպանողականներուն դաւանանքը պարզապէս Հայ-մարդկային է. յառաջդիմականներունը՝ Հայ-մարդկային և համա-մարդկային գաղափարներու համերաշխութիւն մը. արմատականներունը՝ զուտ համա-մարդկային: Այս վերջիններս սակայն կը զգան թէ հաստատ կուուանի մը վերայ չեն կանգած, և ազգայնութեան գաղափարն իսկ է որ իրենց դէմ կ'ելլէ ահեղ դօրութեամբ: Իրենց մէջէն քիչեր են որ ճակատ առ ճակատ կուուելու քաջութիւնը ունենան. շատերը խոտորնակի ընթացքով կուզեն յառաջանալ, և կեղծելու հարկին մէջ են ընդհանրապէս:

Յառաջդիմականները հոժ կուսակցութիւն մը կը կազմեն, բայց կատարելապէս համաձայն չեն մէկ ծրագրի մը վրայ: Պ. Սարգսեանց, որ յառաջդիմական պետերէն է, ինչ ուժգնութեամբ որ կը պատերազմի Պահպանողականներուն դէմ, կամ ինչ գօրութեամբ որ Համա-մարդկայինները ջախջախել կուզէ, միևնոյն թափով կը յարձակի նաև իր բարեկամներէն սմանց վրայ եւ, անոնց յարուցած յառաջդիմական խնդիրները քննադատելու համար:

Յառաջդիմականները իրենց մէջ որքան որ ալ կատարելապէս համաձայն չգտնուին ծրագրի մը ամէն կէ-

տերուն վրայ, բայց և այնպէս այսօր կուվկասի բարոյապէս էն հզօր կուսակցութիւնը կը ներկայացնեն: Իրենց տարածած գաղափարներովը հետզհետէ կը պատրաստեն հանրային կարծիք մը որ օրէ օր աւելի ուժգնապէս պիտի ներգործէ Հայոց եկեղեցական վարչութեան վրայ: Չենք կրնար անտարբեր մնալ այն ազգեցութեան որուն կ'ենթարկուի Էջմիածինը: Էջմիածինը, իբր հայ եկեղեցիին մարմնացում, ամէնու է: Ու կըրնամ ըսել թէ՛ Էջմիածինը Լուսաւորչական հայունը չէ միայն, այլ ամէն հայուն, իբր հայ ազգայնութեան Տունը: Ու երբ յառաջդիմականներուն էն հեղինակաւոր ներկայացուցիչները կը խօսին, ուշադրութեամբ մտիկ ընելու ենք անոնց, և յայտնելով մեր սեփական համոզումներն ալ, ջանանք գէթ եկեղեցիին շուրջը միաբանութիւն մը հաստատել:

Պ. Սարգսեանցի «Հին ցաւ»ը խորհրդածութեանց առատ նիւթ կը հայթայթէ, ու առիթը պիտի չպակսի մեզի անոր մէջ ուսումնասիրուած խնդիրները քննել:

Առ այժմ կը բաւականանամ նիւթերուն վրայ ամփոփ գաղափար մը տալ ընթերցողներուն:

Առաջին յօդուածին նիւթն է, «Աւտորուիզմ և Հոգեւորականներ».— կամ մեր լեզուով «Այլասիրութիւն եւ Հոգեւորականներ»: Բայց «աւտորուիզմ» թէ «այլասիրութիւն» ըսենք, անօգուտ պիտի չըլլայ բառին բացատրութիւնը ներկայացնել հեղինակին գրչովը. «Չունել անձնական բարեկեցութիւնը, իր «ես»ը, ուրիշի բարօրութեան համար, մոռնալ իրան (ինքզինքը) «ոչ-ես»ի համար՝ դա այն բարձր բարոյական զգացմունքն է, որ քարոզել է Գրիստոս: Այժմեան փիլիսոփայութիւնը այդ գաղափարը կոչում է ալտրուաիզմ և նրտն (զայն) ընդունում է իբրև հիմնաքար հասարակական առաջդիմութեան:» Ու կը հետևցնէ որ մաքուր քրիստոնէութիւնը այլասիրական գաւանանք մը պէտք է ըլլայ, եւ հոգեւորականները, իբր աւետարանի աշակերտ, այլասիրութեան մարմնացումը ըլլալու են:

Երկրորդ յօդուածով, որուն վերնագիրն է «Մօտիկ անցեալից» կը խօսի այն շարքներուն վրայ զոր կարբեցիի նման կաթողիկոս մը պատճառած է հայ ազգին՝ սակայն անհատի մը տխմարութեանը համար ժողովուրդը ցրտացած չէ իր եկեղեցիէն. կարբեցիին Աշտարակեցի մը յաջորդած է:

Երրորդ յօդուածը «Ինչի՞ համար են» վանքերու անտարբերութիւնը կը պարզէ կոտորածներէ որք մնացողներուն համար:

Չորրորդ, հինգերորդ, վեցերորդ յօդուածները քննութեան կ'անեն հետևեալ նիւթերը՝ «Վերարաւորը մեր կեանքում», «Կղերի դերը», «Կեանքի քննադատութիւնը»: Իւրաքանչիւր յօդուածը առանձինն ուշադրութիւն կը գրաւէ, և առիթ կ'ունենանք անոնց վերադառնալու:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԹԷ ԼԱՆՔ ԹԷ ԵՐԹԱՆՔ

Հայոց եկեղեցիին զէմ Օրմանեանին եւ Տատեանին բոլոր դաւադրութիւնները որպէս զի կատարելապէս յաջողին, պէտք է որ Կ. Պոլսոյ կեդրոնական վարչութիւնը կազմող երկու ժողովները, Կրօնականն ու Քաղաքականը, իրենց մեղսակցութիւնը նուիրեն այդ ոճրագործներուն: Քաղաքական ժողովականներուն վրայ չենք խօսիր: Հատընտիր էֆէնտիները զոր ջարդուփշուր եղած Ազգային ժողով մը խելայեղ շփոթութեան պահու մը ազգին գերագոյն վարչութեանը կոչեց, անոնք իրենցմէ սպասուած ծառայութիւնը կը մատուցանեն Երևոյին: Իրենց էութիւնը սուլթանին շրթունքներէն առկախ տեսնող լիկաժ լուիկ էֆէնտիներէն ոչ ոք ընդդիմադրութեան մը շուրջը կ'ակնկալէր, բայց ներքի էր ուրիշ աչքով դիտել գոնէ եկեղեցականները, որոնք իրենց ամբողջ գոյութիւնը ազգին պարտական են: Երկու եպիսկոպոս՝ Գրիգորիս Յովհաննիսեան եւ Վահրամ Մանկունի քաջասիրտ եկեղեցականներու, իրենց անձը հօտերուն վրայ գնող հովիտներու իբր մտատիպարները ներկայացան: Ինչ ըրին: Եբբ մեզի Հաղորդեցին Օրմանեան-Տատեանի սրբապղծական դաւադրութիւնը, միանգամայն կ'ըսէին թէ այդ երկու եպիսկոպոսները այս անգամ ալ «անվեհեր ախոյեան» կանգնեցան ազգին իրաւունքներուն:

- Ինչ ըրին, հարցուցինք.
- Ուժգնապէս բողոքեցին, եղաւ պատասխանը.
- Յետո՞յ.
- Յետոյ, հրաժարական տուին եւ տուններնին քաշուեցան.
- Յետո՞յ.
- Յետոյ ստիպուեցան հրաժարականնին ետ առնել:
- Ինչո՞ւ.
- Որպէս զի ասպարէզը Օրմանեանին առջեւ բաց չմնայ.
- Կամ թէ, պատրիարքութեան ասպարէզը իրենց առջեւ բաց մնայ:

Ահա չորս տարի է որ այս երկու եպիսկոպոսները ազգին իրաւունքներուն «անվեհեր ախոյեան» ի համբար կը վայելին: Ամէն անգամ որ Օրմանեան եւ Տատեան նոր դաւ մը կը նօթեն, փսփսուքը Պոլիս ականջէ ականջ կը տարածուի, «Գրիգորիս եպիսկոպոս, Վահրամ եպիսկոպոս կը դիմադրեն կոր, պիտի յաղթեն»: Ու համբար կը տարածուի արտասահման, թերթերը կը սկսին զրուատել «ազգային իրաւունքներու անվեհեր ախոյեանները»: Բայց Օրմանեան-Տատեան կը քալեցնեն ինչ որ կ'ուզեն, երկու եպիսկոպոսները կը բողոքեն, կը հրաժարին, տուններնին կ'երթան, յաջորդ նստին ներկայ չեն գտնուիր: Բայց երկրորդին հոն են: «Թէ՛ լանք թէ՛ երթանք» թէ՛ բողոքենք թէ՛ ժողովական մնանք: Ու այսպէս չորս տարի է ազգը իր բոլոր իրաւունքներէն կը կապտուի, Եկեղեցին կը պղծուի մահմետականութեան ոտնձգութեամբ,

ու երկու «անվեհեր ախոյեանները» միշտ կը բողոքեն, բայց միշտ ալ կը համակերպին: Եւ եթէ վաղը սուլթանը ուզէ որ Քրիստոսի Յարութիւնը երկուշաբթի տօնենք եւ ոչ թէ կիրակի, տարակայս չունենանք թէ երկու ախոյեաննեւր գարձեալ պիտի բողոքեն, բայց Չատկի պատարագը երկուշաբթի պիտի ընեն:

Խաղը երկար տեւեց. վերջանալու ժամանակը հասած է: Չորս տարուան մէջ ազգը այդ երկու եպիսկոպոսներուն մշտայորդ բողոքներէն ինչ շահեցաւ չենք գիտեր, բայց թէ իրենք ինչ շահեցան ան գիտենք: Այդ եպիսկոպոսներէն մէկը Հնդկաստանէն, միւսը՝ Էջմիածնէն Պոլիս կուգային, համբաւի մը բեռան ներքև կըքալ, բայց ոչ այն բեռը որուն համար ըսուած է «զի բեռն իմ թեթեւ է»: Ինչ է է, այդ անցեալը իր պատանքին մէջ պլլուած կը թողունք. հիմակ դեռ Յովսափաթու Չորին փողերը չեն որ կը հնչեն, բայց յիշեցնենք թէ էր եբբն ուր Յովհաննիսեան եւ Մանկունի անունները մեր լսելիքներուն քաղցրահնչակ չէին թրթորալ: Քանի մը «տերրօրական» բողոքներով, ամէնքն ալ «ձայն բարբառոյ ի Պատրիարքարանի» որոտալու դատապարտուած, մեր երկու եպիսկոպոսները փորձեցին թէ ժողովրդակաճութիւնը կրնայ, գոնէ իրենց համար, «քաղցր լուծ մը կ'ընթեւ բեռ մը» ըլլալ:

Կը բաւէ: Հայ ազգին համար զրպական եւ ոչ թէ խաբարայական գործողութեանց ժամանակը հասած է: Մենք չենք պահանջեր որ Մանկունի եւ Յովհաննիսեան եպիսկոպոսները անպատճառ Օրմանեաններէն տարբեր արարածներ հանդիսանան, բայց կրնանք պահանջել որ չի շարունակեն ազգը խաբել, ապահովելով թէ քանի որ իրենց կը հսկեն, ազգը կրնայ հանգիստ ննջել: Կը յիշեցնեն մեզի Ֆրանսացի զօրավարը որ 1851ի պետական հարուածին նախընթացը Ազգային ժողովին կը գոչէր, «հանգիստ եղէք, երեսփոխաններ, ես կը հսկեմ արթուն»: Միւս առտուն Նափոլէոն Գի ոստիկանները նախ զօրավար Շանկառնիէի հանգիստ քունը խանգարեցին, նախ զինքը շիփ շիտակ բանտ առաջնորդելով, ու ետքէն ալ մէկիկ մէկիկ բոլոր ընդդիմադիր երեսփոխանները: Ու այս մէկ անգամ չէ որ մենք այդ անդհական զարթնումը կուեննանք: Չորս տարի է որ Օրմանեան եւ Տատեան իրենց պետական հարուածներովը ազգին տունը իր հիմերէն կը խախտեն: ու չորս տարի է երկու «ախոյեանները» մեզի կ'ապահովցնեն թէ իրենք կը հսկեն, հանգիստ մնանք:

Անձերնին իրենց հօտին վրայ գնող եկեղեցականներ են, թող գործնական արիութեան մը նախափորձը տան մեզի: Բողոք, հրաժարական շատ հանգստապատառ քաջութիւն են: Կրնան վարագոյրը փակ, Հայոց Աստուծոյ տաճարին բեմէն, իրենց լուսաւորչատուր իշխանութեան զօրութեամբ, անաթէման շանթել անոնց զըլխուն, որոնք Լուսաւորչի տունը մղկիթին մասնաճիւղը կ'ընեն, ինչպէս Պատրիարքարանը Երևոյին:

### ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍԸ

Շարունակորդիան

Ե.

Մեր պատմութեան հերոսը, Պ. Աբգար Տէր-Սիմէոն Մելիք Կուլտամեանց, մինչեւ հիմակ խորհրդաւոր կիսաստուերի մը տարտամութեան մէջէն միայն ինքզինքը ցոյց տուաւ: Մեր ուշիմ ընթերցողները հասկցան անշուշտ որ Կուլտամեանցի պաշտօնին հանգամանքն էր ասոր բուն պատճառը և ոչ թէ մեր կողմէ ո և է ջանք մը, չար նախանձէ զրդեալ, մութին մէջ ձգելու համար գործիչ մը որուն յղացած հօկայական ծրագրին շուրջը կը դառնայ արդէն մեր բովանդակ պատմութիւնը: Այս կերպ վարուելով վտանգ էինք որ լիովին պիտի արժանանայինք մեր հերոսին հաւանութեան՝ որուն յաճախ յեղիծող մէկ խօսքն էր.

— Մենք հեքեաթների փէրիններն ենք, նրանց պէս պէտք է անտեսանելի մնանք և մի փոքրիկ գաւազանի ծայրը ճօճելով վարենք ամէն բան:

Սակայն հիմա վայրկեանը հասու ձուկի պոչ մը և մազի խորձ մը կրակին վրայ այրելու, որպէս զի փէրին երկայ մեր աչքերուն:

Քառասուն տարեկան, թուխ, միջահասակ, մօրուսաւոր, զիրուկ մարդ մըն էր Կուլտամեանց: Բուն անունը Վարդան Մարտիկեան էր. Էրզրում ծնած՝ հոն առած էր իր նախնական կրթութիւնը, յետոյ Պոլիս եկած և երկրորդական վարժարան մը յաճախած էր: Պոլսէն ինքզինքը նետած էր Եւրոպա, երկու տարի ժուռ եկած էր Զուիցերիոյ և Գերմանիոյ մէջ, ապա ենթադրելով որ մանկավարժ եղած է՝ վերադարձած էր Պոլիս, արհեստը ի գործ դնելու համար: Մանկավարժ ըլլալուն մասին իր ենթադրութիւնը թէեւ շատ խախուտ հիմերու վրայ հաստատուած՝ այսուհանդերձ Պոլիս գալէն ետքը հաւաստի իրողութիւն մը դարձաւ և Ուսումնական խորհուրդը չի համարձակեցաւ նոյն իսկ ձեւակերպութեան մը բովէն անցընելու զինքը առաջնակարգ մանկավարժի վկայականը տալու համար: Իր անցագիրը զոր Շընէվի թրքական հիւպատոսին կողմէ վաւերագրել տուած էր, իր մանկավարժի կարողութեան մասին եղած ամէն կասկած փարատեր էր: Բայց այդ փայլուն վկայականը չբացաւ իր առջև Պոլսոյ վարժարաններուն զուռները, որովհետեւ Վարդան Մարտիկեանի կը պակօեր մանկավարժի ամէնէն էական հանգամանքը, այն է՝ Կովկասցի ըլլալը:

— Էրզրումցի մանկավարժ կ'ըլլա՞յ, կ'ըսէին բոլոր

զպրոցի տնօրէններն ու հոգաբարձուները ճիշտ այն յաճախութեամբ հաւատութեամբ որով հրեաները կը մերժէին Յիսուսը՝ պնդելով թէ Նազարէթէն մարգարէ չելար:

— Գիտե՛մ ընելիքս, խորհեցաւ Վարդան որ ձեռնեւրէցութենէ զուրկ չէր. Կովկաս կ'երթամ մէկ երկու տարի կը մնամ ու Կովկասցի եղած կը վերադառնամ:

Եւ պայուսակը կապելով մտաւ Պաթումի շոգենաւը: Երեք տարի ետքը Պոլսոյ թերթի մը գաւառացի մէկ թղթակիցը կը գրէր.

«Վերջապէս մեր ազգային վարժարանը որուն անկարգ վիճակը տարիներէ ի վեր կը տևէր, փայլուն և բարեկարգ շրջանի մը մէջ պիտի մտնէ քիչ ատենէն: Նոր հոգաբարձութիւնը, որ քաղաքիս լուսաւորեալ երիտասարդութենէն կազմուած է, ամէն զոհողութիւն յանձն առնելով պայմանագրութիւն մը կնքած է Կովկասցի համալսարանի անկախութեամբ ուսուցչապետի մը՝ պարոն Աբգար Կուլտամեանցի՝ հետ որուն պիտի յանձնուի զբարոցին տնօրէնութիւնը և կարեւոր դասախօսութիւնները: Յարգելի ուսուցչապետը քիչ օրէն քաղաքս կը ժամանէ: Պարոն Կուլտամեանց որ Զուիցերիոյ եւ Գերմանիոյ բարձրագոյն համալսարաններուն մէջ կատարելագործած է իր ուսմունքը, քաղաքիս երիտասարդութեան միահամուռ թախանձանաց միայն զիջանելով հաճած է թողուլ Կովկասն հոս գալու համար:»

Այլ Էրզրումցի Վարդան Մարտիկեան աներեւոյթ եղած էր ու իրեն յաջորդած՝ Կովկասցի Աբգար Կուլտամեանցը:

Մանկավարժը երկար չմնաց այն քաղաքը որուն վարժարանը պիտի բարեկարգէր միահամուռ թախանձանաց զիջանելով: Գացած օրէն արմատական փոփոխութիւն մը ընել ուզեց որուն շնորհիւ զպրոցը պիտի զերազանցէր զերմանական վարժարանները: Ի զուր հոգաբարձութիւնը ինչորեք օր քիչ մը բարեկարգութեամբ առայժմ զոհանար Կուլտամեանց: Չէ՛, անպատճառ պէտք էր որ զերմանական վարժարանները զերազանցէր:

— Գոնէ անոնց հաւասարցնելով հիմակուհիմա երթանք, ըսաւ երիտասարդութիւնը որ սկսած էր զգալ զըլլուն եկած փորձանքը:

— Չէ՛, պէտք է նրանց զերազանցենք, մի՛թէ մենք կապիկի պէս նրանց ետեից պիտի գնանք... դա ինչ հոս հոսութիւն է, պնդեց Կուլտամեանց որ իրաւամբ համոզուած էր թէ Կովկասցիութեան առաջին պայմանը յաճախութիւնն է:

Սկսաւ զերազանցութեան գործը, եւ քանի մը ամիս ետքը այնքան կռիւներու տեղի տուաւ որ պարզապէս զինքը բռնի զուրս հանեցին քաղաքէն:

Բարբեղաղաբար, իրեն համար, երկար ատեն բացը չմնաց: Ուրիշ թախանձանքներ եկան գտան զինքը եւ հրաւիրեցին տարբեր գաւառական քաղաքներու մէջ ուր քանի մը ամիս միայն կը պաշտօնավարէր ու կուրելով կը

ձգէր կ'երթար: Այս կերպով եթէ վարժարանները չէին գերազանցեր գերմանականները, գոնէ իր համբաւը կը տարածուէր ամէն կողմ: Նորագոյն գաղափարներով տոգորուած, սկզբունքի ու նկարագրի տէր, յամառ, աննահանջ, վիճասէր մարդու համբաւը շինած էր և ոչ ոք կը կասկածէր իր կովկասցիութեան մասին: «Իշտէ աւանկ մարդիկ են կովկասցիները, կ'ըսէին գրեթէ հիացումով, խօսք չեն հասկնար բայց սկզբունք ունին. մենք անոնց հակառակն ենք, խօսք կը հասկնանք, բայց սկզբունք չունինք:»

Իր թափառականութեան մէջ կուլտամեանց ամէն անցած տեղերը կարող եղած էր ձգել նաև քանի մը խանդավառ հիացողներ իր վրայ: Ասոնք այն երիտասարդներէն էին որոնց յաճախ կը հանդիպէինք: Ապուշութեան սահմանները գեղերող սոսկալի կերպով անտանելի էութիւններ, որոնք իրենց կեանքը կ'անցնեն բերանաբաց հիանալու որ և է մէկուն վրայ որ բախտը կամ մանաւանդ անբախտութիւնը կ'ունենան իրենց վրայ ազդելու: Այլ անիկա է իրենց մտատիպարը՝ հերոսը՝ կուռքը: Անոր պէս խելացի, անոր պէս կատարեալ, անոր պէս աղուոր, անոր պէս ուժով մարդ չի կայ ու վայ անոր որ համարձակի խնդրոյ նիւթ ընել իրենց կուռքին հազար ու մէկ արժանիքներէն մին. այն ատեն գրեթէ մոլեգին կատաղութեամբ կը յարձակին ընդդիմախօս ամբարիշտին դէմ և կը ջանան ամէն խենթութեամբ միջոցներով պաշտպանելու որբութիւն սրբոցը որ սակայն, իրենց իսկ յայտարարութեամբ «արդէն երբեք պաշտպանուելու պէտք չունի:»

Կուլտամեանցի այս կարգի խանդավառներն էին որոնք յաջողեցան զինքը Սև Մովու նաւահանգիստներէն մէկուն դպրոցի տնօրէն կարգել: Հակառակ իր կրած անյաջողութիւններուն: Իր պաշտօնատեղին հասնելուն պէս կեղծ կովկասցիին առաջին գործը եղաւ դպրոցը փակեալ առժամեայ կերպով:

—Մինչև որ Զուիցերիայէն ու Գերմանիայէն նոր մէթոտով դասագիրքերը եւ աշխարհացոյց տախտակները չի գան չպէտք է որ երախտները դատի սկսեն, վճռեց:

Քաղցրեցիներուն մեծ մասը տարօրինակ գտաւ այս որոշումը:

—Թո՛ղ հիմակուհիմա եղած գիրքերով դա սերը շարունակուին մինչև նորերուն գալը, փոխանակ քանի մը ամիս դպրոցը փակ մնալու, կ'առարկէին ասոնք:

—Ապուշներ, դուք ի՞նչ կը հասկնաք մանկավարժութենէն, ի՞նչպէս կը համարձակիք դիտողութիւն ընել կուլտամեանցի պէս համայնարանականի մը որոշումին. ի՞նչ խաւարամիտ, յետադիմական, պահպանողական, անհամար, տիրացու մարդիկ էք. քիչ մը սպասեցէք ի՞նչ կ'ըլլայ, մինչև որ նոր գիրքերը չի գան չպէտք է դատի

սկսիլ կ'ըսէ կոր... հարկաւ բան մը գիտէ. կովկասցիները մեզի պէս առանց սկզբունքի, առանց նկարագրի մարդիկ չեն, իրենց ըրածը գիտեն, կը պողային խանդավառները:

Ինչ որ մասնաւորապէս կը կատարեցնէր այս վերջինները այն պարագան էր որ կը գտնուէին մարդիկ որոնք կը համարձակէին դիտողութիւն ընել «չպէտք է որ»ով բանաձևուած որոշումի մը: Իրենց խանդավառութիւնը կէտուակէս պիտի նուազէր եթէ կուլտամեանց «պէտք չէ որ աշակերտները դատի սկսին» ըսած ըլլար:

Քանի մը ամիս անցաւ և օր մըն ալ լսուեցաւ թէ գիրքերն ու աշխարհացոյց տախտակները հասեր են և մաքսը կը գտնուին: Մնողքներուն ցնծութիւնը կը հաւասարէր տղոց տրտմութեան. ամէնքը իրար կը շնահաւորէին եւ դպրոցի բացման թուականին վրայ գուշակութիւններ կ'ընէին: Սակայն անակնկալ մը եկաւ խանգարելու այս կարճատև ուրախութիւնը: Կառավարութիւնը որոշած էր ամբողջ գիրքերը քննութենէ անցընել դպրոցի տնօրէնութեան յանձնելէ առաջ: Քննութիւնը տեւեց տմիսի մը չափ և արդիւնքը այն եղաւ որ ամբողջ դասագիրքերը, աշխարհացոյց տախտակներով միասին, փնտասակար վրձնուեցան ու վար դրուեցան: Քաղցրին մենծ աղաները կանչեցին կուլտամեանցը, հաղորդելու համար իրեն այս գոյժը:

—Է՛, էտպէս պէտք է ձգէք գրքերը մաքսում, հարցուց կուլտամեանց յանդիմանական շեշտով մը:

—Կառավարութիւնը փնտասակար դատեր է այդ գրքերը և բացարձակապէս արգիլեր է, անկարելի է ա՛լ անոնցմով զբաղիլ, ի՞նչ կ'ուզես որ ընենք...

—Խօ՛, ի՞նչ տղամարդիկ էք դուք, որովհետև կառավարութիւնը արգիլեր է, պէտք է թևերը ծալած նստէք. շարժվեցէ՛ք մի քիչ... շարժվեցէ՛ք:

—Ի՞նչ շարժվինք:

—Դնացէք մաքսումը բռնի դուրս գձեցէք ծրարներին, գոչեց կուլտամեանց ոտք ելլելով եւ երկու թևովը սնտուկ մը բռնի դուրս քաշել ձևացնելով:

Ասկէ աւելի կատարեալ կարելի չէր կովկասցիութիւն կեղծել:

Բաւական յոգնեցան խեղճ աղաները համոզելու համար զինքը թէ անկարելի էր որ և է կերպով գիրքերը կառավարութեան քովէն առնել: Մանկավարժը միշտ կը դառնար սնտուկը երկու ձեռքով դուրս քաշելու ձեւին եւ կ'աւելցնէր.

—Խօ՛, աւելի հեշտ ինչ կայ:

Աղաները հրամարեցան խօսք հասկցնելէ իրեն, ինքն ալ յամառեցաւ իր որոշման մէջ եւ չուզեց դպրոցը բանալ հին դասագիրքերով: Խանդավառները բնականաբար դատապարտեցին մենծ աղաները և արդարացուցին

մանկավարժ-ուսուցչապետը :

— Ինչ նկարագրէ զուրկ մարդիկ են առոնք որ չեն կրնար կոր կառավարութեան դիմադրել . թմրած, ապականած, ոչնչացած սերունդ . . . . Իրաւունք ունի Կուլտամբանց, թո՛ղ վարժարանը փակ մնայ, աւելի օգտակար կ'ըլլայ, քանի որ բացուելովը տղաք սխալ ուղղութեամբ պիտի կրթուին :

Եւ այս տրամաբանութեան մէջ այնչափ առաջ գացին կեղծ կովկասցիին կուսակիցները որ առաջարկեցին ազգային իշխանութեան շնորհակալութեան գիր մը ուղղելու Կուլտամբանցի այն ծառայութեան համար զոր մատուցած էր ապագայ սերունդին՝ փակ պահելով զպրոցը : Ազգային իշխանութիւնը որ մասնաւորաբար կը ներշնչուէր հարուստ եւ պահպանողական դասէն, ո՛չ միայն տրամադիր չերեցաւ փառաբանելու Կուլտամբանցի առհայտ մանկտին մատուցած այս միտական ծառայութիւնը, այլ ընդհակառակը որոշեց զազդեցնել ամիսներէ ի վեր իբրև վարժարանի անոր սահմանուած ամսականը :

Ասով զրկընդիստոն պայքարը սկսաւ քաղքին երկու բաժանումներուն մէջ եւ հետզհետէ այնքան սաստկացաւ որ մենծ աղաները, խնդրին վերջ տալու համար, գործածեցին իրենց սովորական միջոցը, այն է կառավարութեան դիմել եւ իրենց հակառակորդները ցոյց տալ իբրև խռովարար : Կառավարութիւնը որ արդէն հաշտ աչքով չէր նայեր Կուլտամբանցին, զոր ուստակառակ կը կարծէր, անմիջապէս կոչեց զայն եւ պատուիրեց մեկնել քաղաքէն : Կուլտամբանց միշտ այն ձևով որով կը խրատէր մենծ աղաներուն գիրքերու սնտուկը առնել մաքսէն, քաղեց իր սնտուկը սենեակէն եւ նետուեցաւ շողմնաւ :

Չորս օր ետքը Պոլիս կը հասնէր եւ անարգել ցամաք կ'ըլլար շնորհիւ Ֆէնիքս ընկերութեան մէկ ապահովագրին զոր իբրև ուսական անցագիր ցոյց տուած էր քննիչ ոստիկանին : Մեր մանկավարժը իր չորսօրեայ ուղեւորութեան ժամանակ երկարօրէն մտացած էր իր ապագայ գործունէութեան մասին, եւ որոշած էր հրաժարիլ ուսուցչապետի տիտղոսէն որ գիտէր թէ պիտի չքայլէր Պոլսոյ մէջ, ուր զինքը կը ճանչնային իբրև Էրզրումցի վարդան Մարտիկեան : Հիմակ գործունէութեան լաւագոյն դաշտի մը՝ յեղափոխութեան՝ շահագործումը կը հրապարակէր զինքը : Այս սուպարէզը նոր էր տակաւին, հետաժողովներ շատ չի կային եւ գործիչները վարկաբեկ չէին եղած : Յախուստ յոյսերու, աչքափակ վստահութեան, յարածուն ոգեւորութեան շրջանն էր տակաւին :

Հունձքը առատ էր եւ մշակները օակաւ : Կուլտամբանց յեղափոխական ըլլալու որոշում տալէ ետքը կազմեց իր յատակագիծը : Նախ՝ պիտի պահէր կովկասցիութիւնը որ իր յաջողութեան գլխաւոր օժանդակն էր . յետոյ պիտի չղիմէր արդէն Պոլսոյ մէջ գործունէութեան սկսած կուսակցութեան մը որուն մէջ

միայն երկրորդական գեր մը կրնար խաղալ, աւելի վերտանգալից գոյցէ քան շահաբեր . այլ լբրև կուսակցութեան մը ներկայացուցիչ՝ ինքը պիտի ըլլար նոր կազմակերպութեան մը պետը : Ժամանակ չկորսնցոյց գործի սկսելու համար : Անմիջապէս իր ծառայութեան մատուցումը ըրաւ Եւրոպա կեդրոնացած յեղափոխական կուսակցութեան որ դեռ Պոլսոյ մէջ որոշ մարմին մը չունէր : Իր կովկասցիութիւնը եւ հայրենիքի համար զոհուելու տրամադրութիւնը զոր յայտնած էր առաջին նամակով, թէեւ լուրջ նկատողութեան առնուեցան կեդրոնի կողմէն, սակայն բաւական չհամարուեցան լիազօր ներկայացուցիչ վկայականը տալու իրեն : Կեդրոնը ուզեց գիտնալ թէ Կուլտամբանց ունէ՞ր գործունէութեան որս ծրարագիր մը եւ թէ ի՞նչ էր այդ : Ապագայ ներկայացուցիչը ձեռքի տակ պատրաստ ծրագիր մը չունէր, բայց կեդրոնին պաշտօնագիրը առնելուն պէս հատ մը շինեց եւ անմիջապէս զրկեց : Քտոստուն հոգիով Պոլսոյ տիրելու հսկայական խորհուրդ էր :

Կեդրոնը ափիբերան մնաց : Թէեւ իր մէջ չէին պակսէր հօր երեւակայութեան տէր մարդիկ, այսուհանդերձ իրենցմէ ոչ ոք այդ տեսակ գաղափար մը կարող եղած էր յղանալ մինչեւ այն ատեն :

Շարաթ մը ետքը եկաւ լիազօր ներկայացուցիչ վկայականը :

Հիմակ հասած էր իր մուրատին : Բայց ասիկա առաջին քայլն էր, եւ պէտք է ընել զիւրագոյն քայլը : Յեղափոխական ամբողջ մարմին մը պէտք էր ստեղծել վարչական խորհրդով, գործադիր ժողովով, թաղային խումբերով : Կուլտամբանց գործի սկսաւ : Խօսելու, մարդ համոզելու ձիրքը չէր որ կը պակտէր իր քով, ընդհակառակը իր մեծագոյն յատկութիւնն էր այդ :

— Ես պրոպագանդիստ ծնուել եմ, կ'ըսէր արդար հրպարտութեամբ մը :

Ժամերով կարող էր վիճաբանիլ ընդդիմախօսին հետ առանց ամենափոքր յսգնութեան կամ ձանձրոյթի նշան մը ցոյց տալու : Իր սկզբունքն էր զիմացիներն չխնայել մինչեւ որ չստիպէր զայն — « Իրաւունք ունի՞ր եղբայր » ըսելու : Տեսակ մը բռնի հաւանութիւն էր որ կը խլէր խօսակիցէն . սակայն այս չտփով գոհ չեւ ըլլար ու իր գոհը հանգիստ չէր թողուր . օրերով ետեւէն կ'իյնար խեղճին, նորէն ու նորէն կրկնել տալու համար իր հաւանութիւնը : Այս կերպ վերջապէս կը յաջողէր գաղափարակից ընել զայն իրեն :

Մարդ համոզելու իր այս գրութեամբ Կուլտամբանց քանի մը ամիս ետքը յաջողեցաւ արդէն հիմնել իր յեղափոխական մարմինը որ խանդավառութեան հոսանքէն մղուած՝ օրէ օր կը տարածուէր ու կը բարգաւաճէր : Իրաւական նպատակները հետզհետէ կը բազմանային եւ պրոպագ

զինտը կարող կ'ըլլար իր ծախքերը հոգայել ետքը նոյն-  
իսկ ամսական կարևոր գումար մը զրկել կեցողոնին:

Այդ դրամի աղբիւրը, որ հրեքէ այնքան առատա-  
բուխ չէր երևակայած, զինքը շլացուց. մեծ փառասո-  
րութիւններու հնարը վառեց՝ իբր օրտին մէջ: Ճղճիմ օրըս-  
տօրէական ապրոշանը որօջն միայն կ'ակնկալէր յեղա-  
փոխական գործունէութեան մէջ մտնելով, ա'լ չգոհա-  
ցուց զինքը: Խոշորք վճռական հարուածով մը իր ամ-  
բողջ ապագան ապահովելու կարելիութիւնը ընդնշմա-  
րեց այս նոր ասպարէզին մէջ եւ ուզեց հասնիլ անոր:

Ասոր համար երկու միջոց անհրաժեշտ էին. նախ՝  
նոր զարկ մը տալ Պոլսոյ գրամական հաւաքումներուն,  
երկրորդ՝ դադրեցնել կեցողոնի դրամ զրկելու գրութիւնը  
զոր մինչեւ այն ատեն գործածած էր իր վրայ եղած  
վտտահութիւնը ամբաստանելու և կասկածներ չարթնցը-  
նելու համար:

Կուլտամեանց որոշումը տալուն պէս, իրբեւ հզօր  
նկարագրի տէր մարդ, իսկոյն գործադրութեանը զիմեց:  
Իր կազմած խումբերուն պետերը կոչեց և ըստ թէ ա-  
միտէ մը յարձակման նշանը պիտի տրուէր Պոլսոյ տի-  
րելու համար, միայն թէ անհրաժեշտ է որ տիրապե-  
տութեան նախորդ օրը տասը հազար ոսկի պատրաստ  
գտնուէր Պոլսոյ կեցողոնական մասնախմբին՝ այսինքն՝  
իր քով:

Վեց հազար ոսկին արդէն կեցողոնը գրել է իմ  
տրամադրութեան տակ, ըստ կեղծ կովկասցին, այժմ  
ձեզ է մնում մնացորդ չորս հազար օսկու չնչին գումարը  
հայթհայթել միայն...տէ՛, տղերք, ձեզ տեսնեմ:

Այդ «տղերք»ներէն մէկն էր Աշոտը, որ, ինչպէս  
տեսանք, իր առած պատուէրը խղճի մտօք կատարեց:

Միւս կողմէ պրոպագանդիստը գրեց կեցողոնին որ  
ներկայ կացութեան մէջ անկարելի էր գրամ զրկել եւ  
թէ ամբողջ հաւաքուած ստակը Պոլիս պիտի ծախսուէր  
մեծ ծրագրին գործադրութեանը համար:

«Լաւ, պահիր փողերը» պատասխան եկաւ:  
Կուլտամեանց ձեռքերը շփեց: Գրեթէ տիրած էր  
Պոլսոյ...  
Սակայն, աւա՛ղ, ուրախութիւնը կարճ տևեց: Անա-  
կընկալ մը կը սպասէր իրեն:

(Շարունակելի)

### ՄԱՍՈՒՐԵԱՆ

Մատթէոս Մամուրեան յունուարին սկիզբը իզմիր  
վախճանեցաւ: Գրագէտները որոնք հանգստութեան դա-  
տապարտուած են, այլ եւս «ի ամօք և փառօք», կը  
նմանին հարիւրամեծի պապիկներուն որոնց վրայ զա-  
ւակ ու թոռ թէև կը գուրգուրան, բայց որոնց աներե-  
ւութեանը իրենց ընտանիքները ծանրապէս հարուա-  
ծող կորուստ չէ: Գրելէ ա'լ դազրած գրագէտին մահը  
իր վերջին երկասիրութեան օրէն կը թուագրի: Մեր զը-  
րականութեան պատմութիւնը արդէն քանի մը տարի ա-  
ռաջ այդ թուականը արձանագրած էր Մամուրեանի հա-  
մար: Տարիքն ու վիշտը ձիւնահեղձ մարեցին հրուստ  
հրապարակագրին հոգեկան կրակը որ, ամէն կրակի  
պէս, առանց ընտրողականութեան հրդեհել կուզէր զէմօ  
եւածը:

Հանգուցեալը ազգէն շատ մեծարուեցաւ, ու պատ-  
կառագրեցիկ անուններէն մէկն էր: Մեր ցեղին անու-  
ոռմաստութիւնը մէջերնիս առածի կարգ անցած է խո-  
րենացիէն ի վեր, եթէ ոչ անկէ առաջ ալ: Բայց եթէ  
մինչեւ իսկ մենք ուսում չտիրող համարուինք, սակայն  
ապահովաբար բաւական ընթերցասէր ժողովուրդ մը ե-  
ղած ենք միշտ ու կը մնանք: Կարդալու զձանքէն մղուած,  
հայ ժողովուրդը իբր գրողներուն համար համակրանքի  
հակում ունեցած է: Նիւթական կեանքի ապականութեան  
օգին մէջ խեղդամահ կորուսելու վտանգին ենթարկուած  
ազգ մը կը զգայ թէ իր մտաւորականները կը նպաստեն  
իր կեանքին պահպանումին, կազդուրելով զինքը բարոյա-  
կան մաքրենի օգի մը շնչառութեամբը:

Մամուրեան մեր մատենագրութեան վրայ անչնչելի  
կնիք դրոշմող գրագետներէն չեղաւ: Իրմէն հատոր մը  
մնայ պիտի: Խոնամտ ձեռքեր եթէ գտնուէր ու Շահ-  
նուր ծածկանուններու յերբէ հրտատարկուած քրոնիկ-  
ները եւ ուրիշ քանի մը գործեր, պիտի կրնան կազմել զիրք  
մը գոր թէ մենք հիմակ հաճոյքով պիտի կարդանք, եւ թէ  
մենէ ետքը եկողները:

Եւ սակայն «Արեւելեան Մամուլ»ին խմբագիրը ա-  
ռաջնակարգ գրագէտ մը հանդիսանալու յատկութիւններով  
օժտուած էր: Իր թափանցող միտքը, սուր իշողութիւնը,  
գեղեցկատէր ճաշակը զինքը մեծ գործեր ստեղծելու սահ-  
մանած կը թուէին: Բայց մարդկային միտքն ալ հո-  
գին նման է: Թո՛ղ բնութիւնը իր առանձնաշնորհսւմ-  
ներովը զեղու գայն, խնամեալ մշակութեամբ է որ պի-  
տի արգասաւորի: Մամուրեան աշխատելու ժամանակ  
չունեցաւ, վառն զի շատ ու շուտ արտադրումի կը հե-  
տապնդէր: Իր ձիրքերը իրեն թշնամիներ եղան, միտ-  
քը խորունկ արօհելու պէտքը զգացնել չտալով: Ան որ

իրը ուժեղ հեղինակ տիրապետելու կոչուած էր, իր կա-  
ռողութիւնները զնտանեց թարգմանչի կրատարական գե-  
րին մէջ: Ու իր ժամանակէն բաժին մըն ալ հանեց ման-  
կավարժական հրատարակութեանց որոնց համար մե-  
նաշնորհեալ տաղանդի մը պէտքը զգալի չէ:

Հրապարակագիրը չապրեցաւ այնպիսի միջավայրի  
մը մէջ ուր իր բնասուր յատկութիւնները զինքը  
չըջապատող կեանքէն գոնէ ուժ ծծէին: Հայաստանէն  
միշտ հեռու մնացած, հեռու կը մնար եւ Պոլսէն՝ մար-  
տադաշտ մեր քաղաքական ճակատամարտներուն՝ որոնց  
Մամուրեան իբր հրամայող սպայ կուգէր մասնակցիլ,  
բայց այնքան յաջողութիւններով որքանը կրնայ ունե-  
նալ կրակի դաշաէն օրերով հեռու ապրող գորավար մը:

Կոռուղ հրապարակագրութեան մէջ ալ թարգմանիչն  
էր որ երեան կուգար: Կը գրէր «ի լսողաց» ըլլալով, ոչ  
թէ «ի տեսողաց»: Ինչ որ ուրիշները կը հաղորդէին, կը  
տեղեկագրէին, ինքն անոնց կը փչէր իր շունչը, կ'ոգևորէր  
զանոնք եւ կը նետէր հրապարակ:

«Արեւելեան Մամուլ»ը որ հրատարակման թուակա-  
նին խոստամտից կը թուէր, չ'ազգեց նոր սերունդին  
զարգացումին վրայ: Ան ալ միշտ հապճեպի ծնունդը:  
Ո՛չ իմաստասիրութեան, ո՛չ գեղեցկագիտութեան, ո՛չ  
զրականութեան մէջ «Արեւելեան Մամուլ»ը առաջնորդ  
մը եղաւ մեզի: Հազիւ թէ դիպուածով ձեռքերնիս կ'առ-  
նէինք ո՛ր է կ'մէկ թիւը անոր մէջ օրուան կոնիւնտու  
վերաբերեալ թղթակցութեանց աչք մը նետելու համար:

Բայց աշխարհաբար լեզուն շատ բան կը պարտի  
Մամուրեանի: Այնպիսի ժամանակ մը որ նոր գրող-  
ները, նոյն իսկ Օտետնի եւ Ռուսինեանի պէս տաղանդ-  
ներ, մեր նորածին գրական աշխարհաբարը հին հայե-  
րէնի հանգուրցներուն մէջ կ'ըլծուած պահելով կը հաշ-  
մանդամէին, Մամուրեան իր գրիչը ազատ օդի մէջ ար-  
ձակեց: Առանց վարանումի նախապատուութիւն տուաւ  
այն աշխարհաբարին որով Այվազոսքի «Բազմավէպ»ն էր  
հիմնած, եւ Ամերիկացի միսիոնար մը Աստուածաշունչ-  
ը աշխարհաբարի վերածած էր: Այդ լեզուն էր օրուն  
վրայ Մամուրեան հզօրապէս ազդեց, զայն մղելու հա-  
մար այն ճամբուն մէջ ուրիկ պիտի յառաջանայ դէպի  
անհուն ասպարէզ մը:

Մամուրեան իր թարգմանութիւններովը յաջողեցաւ  
այդ աշխարհաբարը ժողովրդականացնել անով: Հայա-  
ցուց իր ընտրած գրքերը օրպիսիք են «Վերթեր»,  
«Հազար եւ մէկ գիշերներ», Տիւմա եւ Էօթէն Սիւ, որոնք  
շատ ախորժելի եղան մեր ժողովրդին, որ զեռ մեծ մասամբ  
հայատառ-թրքեվար լրագիր կը կարդար, զրաբար չէր  
հասկնար, եւ գրական փրթութիւն չէր օտացած: Ու  
տեսանք որ կին եւ էրիկմարդ, ամէն հասակի եւ ամէն  
տարիքի հայ որ քիչ շատ կարդալ մը գիտէր, կը լա-  
փէին իզմիրի հրատարակութիւնները, որոնց մէջ Մամուր-  
եան իր մեծ բաժինը ունէր:

Իզմիրցի հեղինակներն ու թարգմանիչները չ'օրոնց  
զուլտն է Մամուրեան, մեծապէս ծառայեցին Հայ ժողո-  
վրդին լեզուական ու գրական նպիսակութեանը: Իրենց  
չնօրհիւ աօրացի հայը սկսաւ գաղափար մը ունենալ Եւ-  
րոպական մատենադրութեան վրայ, եւ սիրել զայն: Եւ-  
րոպական գրքերու հետ հայ ժողովրդին այս ընտելա-  
ցումը զինքը պիտի պատրաստէր ըմբռնել նաև տոհ-  
մային նոր գրականութիւն մը, որ օտեղծուելու վրայ էր,  
եւ ժամանակին հետ յառաջացաւ, ու օր մը իր հայակապ  
զուլտն գործոցները պիտի ունենայ:

Մեր մատենագրութեան եւ օրագրութեան պատմու-  
թիւնը ընդարձակ ուսումնասիրութեանց զուլտներ կը վե-  
րապահեն Մամուրեանի:

Կ'ըզձամ որ Հայ գրասէրներու ընկերութիւն մը, երբ  
լաւագոյն օրերը գան մեզի համար, հատորի մէջ ամփո-  
փէ Վրոյրի ու Եահնուրի քրոնիկներէն հատընտիրներ,  
Սեւ Լեւոն Մարզը, Անգլիական Նամականին, Յառաջա-  
բանները գոր այլ եւս առիթներով գրած է քաջ հայագէտ  
թարգմանիչը, ու այն վերթերը որ նոր սէրը ստեղծեց  
հայ նոր սերունդի մը համար: Այդ մահաբանը պիտի յա-  
ւերժացնէ ԺԹ դարուն մեր մատենագրութեան եթէ ոչ էն  
խորունկ—զոր շունինք զեռ—բայց էն փայլուն մտքերէն  
մէկուն յիշատակը, և միևնոյն ժամանակ պիտի հրճուեցնէ  
զեռ քանի մը սերունդ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՐՅՈՒՆ ԲՈՅ ՀԱՅՇ

Բ.

Պատիկ խումբը, զոր կը կազմեն Ֆինէլլա, Միս  
Ուիլսըն եւ Էրաստուս, շորեպաններով Սըվազէն ճամ-  
բայ կ'իյլէ դէպի Սամսոն՝ ծպտուած Գարա Օղլուի աձ  
օաջնորդութեամբ: Միսիոնարները քիչ մը տեղ յուղարկ  
կ'երթան անոնց. իրենցմէ մին, վերջին պահուն, ըկվու-  
վէր մը կը նուիրէ Էրաստուսի. ու քաղաք կը վերա-  
դառնան:

Երեք օր յետոյ, իրիկուն մը, ճամբորդները հան-  
գիտ առնելու պէտք կը զգան: Գարա Օղլու քարայր  
մը կը տանի գիրենք: Միս Ուիլսըն ուրախութենէն ծափ  
կը զարնէ այդ վիպական իջևանին առջեւ, միջոցեւ  
Ֆինէլլա կը սարսուայ, մտածելով ուրիշ քարայրի մը որ  
այնքան կը նմանի ասոր...: Ձիերէն վար կ'իջնեն, կա-  
պերտները կը փռեն, ու սեղանը կը դրուի, թէյ, պաղ  
հաւ զոր Ֆինէլլա կը տապկէ, կայլն: Քարայրին մէկ

անկիւնը աղւոր խարոյկ մը կը վառի: Միտ Ռիլընի խել-  
քը զլիէն գացած է. ա՛հ, ինչպէս պիտի նկարագրէ այս  
ամէնը իր նամակներուն մէջ, եւ ի՛նչ ազէկ տպաւորութիւն  
յառաջ պիտի բերէ Ամերիկա, Միտիոնարութեան Տա-  
րեկան Տեղեկագրին մէջ. — գիշեր մը քարայրի մը խո-  
րը. — խարոյկին մլմլոտ ցոլքերը. — շորեպանները կը  
քնանան. — հեռաւոր աստղի մը քթթումը կը տեսնեմ  
դեռ, հրեշտակի մը ա՛չքն է որ երկնքէն ինծի կը նայի. —  
մանկութեան յիշատակներ: Ու, ասոնց վրայ, նո՛ր ե-  
ռանդ մը ամերիկացի նուիրատուններուն մէջ, նո՛ր հան-  
գանակութիւն, նո՛ր մղում մը՝ հեթանոսները քրի-  
տոնեացնելու:

Քնանալու ժամը եկած է, ու ամէն մարդ իր նսկիւնը  
կը քաշուի: Էրասոզուս, որ գիտէ իր պատասխանատուու-  
թեան մեծութիւնը, երկու ժամէն ընգոստ կ'արթննայ:  
Լուսինը կը տիրէ քարայրին մէջ: Խարոյկին վրայ  
նոր փայտ կը նետէ, եւ լապտերը կը վառէ: Յանկարծ  
միտքը զաղափար մը կուզայ: Կամացուկ մը կ'երթայ գե-  
պի սուրհանդակին անկիւնը ... ու կը տեսնէ որ հոն  
չէ ան:

— Մտքէս անցա՛ւ, կը մտտայ: Ի՛նչ կայր ապուշներ  
ենք: Մուկի պէս մեզի թակարդը նետեց:

Կը հասկնայոր աւելորդ է շորեպաններուն ձայն տալ,  
ու անոնցմէ օգնութիւն յուսալ: Անմիջապէս Ֆինէլլայի  
բով կ'երթայ, մեղմիկ կ'արթնցնէ գանի, իր վախերը կը  
յայտնէ, ու կը պատուիրէ շուտով հագուիլ:

Մէկէն ի մէկ, ատրճանակի հարուած մը կը պայթի  
քարայրին դուռը:

— Անձնատո՛ւր եղէք Գարա Օղլուին, կը պոռայ խո-  
շոր ձայն մը:

Էրասոզուս մէկ կողմ կը քաշուի ռեվոլվերը ձեռքը:

— Եկէ՛ք ասէք մեզի, կը գոռայ սպառնական ձայ-  
նով մը:

Աւազակները կը վտրանին:

Միտ Ռիլընը, որ այդ միջոցին արթնցած է, խելա-  
գարի մը պէս Էրասոզուսի վրայ կը վազէ կը նետուի «ա-  
գատէ՛ զիս, ագատէ՛ զիս» պոռալով, ու կը մարի կ'իյնայ  
անոր թեւերուն մէջ: Երիտասարդը այդ անկող բեռը մէկգի  
չհրած՝ երկու աւազակ կը խոյանան և թեւերէն կը  
բռնեն: Ա՛լ ամէն բան լմնցած է:

— Շնորհակալ ենք, հա՛նրմ, կ'ըսէ Գարա Օղլու,  
Միտ Ռիլընի դանալով:

— Ո՛վ եո Կուն, աղտոտ օրիկայ, կը գոչէ Էրաս-  
ոզուս:

— Ո՛վ եմ, խո՛ղ միտիոնար, խո՛ղի գուալի: Գարա  
Օղլուն եմ:

Ա՛լ մոռցած է Օքսֆորտը եւ Օքսֆորտի աւանդու-  
թիւնները: Ազամանդներուն տիբբանալու ժամը եկած է  
վերջապէս:

Էրասոզուս եւ Ֆինէլլա կատղած են Միտ Ռիլընի դէմ,

որ իր անճաշ միջամտութեամբ իրենց կորուստին պատ-  
ճառ եղած է: Ան խոֆածը օակայն միաքը դրած է ու  
ղոքել աւազակը. անոր ազնուութեանը կոչում կ'ընէ.  
«Դուք քաջ մարդ մըն էք, կը պաղատի, անշուշտ ձեռք  
պիտի չգպցնէք երկու նորասի օւ անմեղ կոյտերու:»

Ու իր կեղծ ահոաներովը կը ժպտի:

Սյո «նորասի կոյտ» խօսքը Գարա Օղլուն անգամ կը  
շուարեցնէ: «Խեղքին եկած ըլլալու է անպատճառ» կը  
մտածէ:

— Ձէ՛, չէ՛, կ'ըսէ հայրաբար: Կնիկներուն համար  
ազէկ բան չէ վրանին դրամ պահել: Մէյ մը օա քօակնիդ  
ինծի ասուք:

Միտ Ռիլընը կը հնազանդի չկամութեամբ: Ապահ-  
վապէս՝ իր հրապոյրները փափաքուած արգիւնքը առաջ  
բերած չեն:

Գարա Օղլու դրամը կը համրէ եւ կը գրպանէ:

— Վա՛ղը, վաղը կը բաժնենք՝ կ'ըսէ իր յուսախար  
ընկերներուն:

Աւազակը որոշած է Ֆինէլլան պրպտել երբ ընկեր-  
ները քնացած ըլլան, ու ազամանդներուն մէջէն էն աղ-  
ւորները զատել մէկգի գնել իրեն համար: Յետոյ, մնա՛ք  
բարով Հայաստան ու հայրենասիրութիւն, և կեանք իմ  
ազնաւորաց՝ Անգլիոյ մայրաքաղաքը:

Էրասոզուսի ձեռքերը կը կապեն, աւազակ մը դրանը  
տոջու պահապան կը դրուի, և ամէնքն ալ մէյ մէկ ան-  
կին կը տեղաւորուին: Գարա Օղլու, Էրասոզուսի ռեվոլ-  
վերը մէջքը, կը բանայ Միտ Ռիլընի քոնեաքի սրուակը,  
օրկառէթը կը վառէ, եւ կ'ընկողմանի: Միտ Ռիլըն  
հիացումով անոր կը նայի, խանգաղատ թացիկութեամբ,  
գեղադէմ ու հումկու աւազակը տարօրինակ տպաւորու-  
թիւն մը թողած է իր վրայ: Անդրմաղրելի ձգողութիւն  
մը կը զգայ պէպի ան, եւ անոր հետ խօսքի կը բռնուի:

— Ֆինէլլա՛, կ'ըսէ քիչ ետքը Միտ Ռիլընը մանկա-  
մարդ աղջկան մօտենալով, մենք կարծեմ անարդար  
եղանք Պ. Գարա Օղլուին նկատմամբ: Շատ ազնուա-  
կան կերպեր ունի. յայտնի է որ ինամեայ դաստիարա-  
կութիւն մը առած է, և կը յայտարարէ թէ դրամի առ-  
ժամեայ պակասութիւն մըն էր որ զինքը ոտիպեց... այդ  
պզտիկ փոխառութիւնը ընելու: Արդէն, դրամը միտնե-  
րուն պիտի տայ, ու քօակը իրեն պիտի պահէ իբր ի-  
շատակ: Իրաւցնէ՛, ազնուական մարդ մըն է, հալած-  
եալ հայրենասէր մը, հաւատեց ինծի: Շարաթներով  
Միտիոնարութեան տան չորր կողմը պտտեք եւ ծպտած՝  
իմ մօտս ըլլալու համար: Շատ խելացի է: Իմացեր էթէ  
Ամերիկա աղւոր հօւրիներու երկիրն է, ու հիմակ կը  
հաւատայ թէ այդպէս է, թէպէտ եո միակ ամերիկացի կինն  
եմ զոր տեսած ըլլայ:

Ֆինէլլա իրեն խորհուրդ կուտայ որ վազ անցնի ա-  
ւազակին հետ օրիկի—փիլիկ ընելէն:

— Օ՛հ, չէ, չեո գիտեր, կ'ըսէ միւսը կոտորուելով,

իբն հոգիին վրայ խօսեցայ իրեն հետ: Ու մեծ յոյս ունիմ որ կարելի է ապագային դարձի բերել զինքըն Պ. Գարա Օղլուն կը յայտարարէ որ եթէ վաղը նամակ մը գրեմ միտինարներուն՝ պատուիրելով որ պէտք եղած փրկանքը վճարեն, մեզի ազատ ու անվնաս թող պիտի տայ: Տիգրանին վրայ երդունցաւ, ինք անոր սերունդէն է եղբոր:

Բայց քնանալու ատեն է. Միս Ռիլըն ակամայ իր անկիւնը կը քաշուի:

— Ա՛հ, կ'ըսէ հայ աւագակը, երբոր սոխակը իր բոյնը կը փնտռէ, քնանալու ժամը եկած է:

Առաջին անգամն է կեանքին մէջ որ սոխակ կ'ըսեն Միս Ռիլընի:

— Շողոքօրթ, կը հառաչէ խեղճնալով, շողոքօրթ, Երբեք մտածե՛ր էք ձեր անմահ հոգիին վրայ:

— Շատ պիտի ուզէի ատիկա ընել... ձեր աշակցութեամբ, կը պատասխանէ Գարա Օղլուն: Վաղը կը խօսինք հոգիիս վրայ: Մինչև ան ատեն տեղէն չի խախտիր, հոգ մի՛ ընէք: Հիմկուհիմա, ձեզի պիտի երազեմ:

«Ինչ անուական մարդ» կը մըլէ Միս Ռիլըն՝ Ֆինէլլայի ժողովուրդին: «Ատիկա բարոյութիւն վեպ մըն է կեանքիս մէջ: Ու ինչ վեպ: Իր աչքերը աղու մը աչքերուն վստահալիր անուշութիւնը ունին, — ինչ սեւ աղուր աչքեր:»

— Էօֆ, ա՛յլ աս խօսքին վրայ փատցած հաւը լեզուն կը քաշէ կը շնթոկի, կը մտածէ Գարա Օղլուն շունչ մը աննելով, ու ինքն ալ կ'երկննայ: Ու տաքէն թուլցած, քնեաքէն զինովցած, շուտով մը բունը կը տանի: Ընկերները արդէն կը խոկան: Պահապանն ալ քիչ ետքը խարոյկին քով կուգայ տաքնալու, կը հաճի հոն, կ'երեծտկայ, ու վերջապէս ինքն ալ կը փռուի, կը մնայ այնտեղ:

Էրասուրուս միայն արթնուն է: Սիրտը կը արփէ ուժգին: Երկու հրեք բառով իր միտքը հասկցուցած է Ֆինէլլայի. արգեօք մանկամարդ աղջիկը վերջին պահուն պէտք եղած արուածիւնը չի՞ զգար իր մէջը՝ իրենց որոշած յատակագիծը գործադրելու: Բայց ահա Ֆինէլլա իր ժամն է:

— Մկրատս միայն ունիմ չկը փոփոսայ, բայց շատ սուր է: Սըսօ, ան ինչ ձայն է:

— Միս Ռիլընն է՞ կը խոսի կոր: Երբեք իմացե՛ր էիր սոխակի մը խոսալը:

Ֆինէլլա կը կարէ երիտասարդին ձեռքերը կապող շուանը, ու կ'երթայ ձիերը թամբելու, մինչ Էրասուրուս կամացուկ մը Գարա Օղլունի մէջքէն թելովէրը կ'տանէ:

Եթէ գործը Էրասուրուսի մնայ, բնաւ միտք չունի Միս Ռիլընը մէկտեղ աննելու: Բայց վերջապէս կարելի չէ զինքը հոն ձգել:

— Գնա իրեն ձայն սուր, կ'ըսէ. բայց ըսէ որ եթէ ամենապզտիկ աղմուկ մը հանէ, թելովէրս ձակտին կը պարպեմ:

Չիբրը պատրաստ են, ու երբեք մէկ կը մեկնին, Միս Ռիլըն հրածեշտի անձկազին նայուածք մը նետելով իր քնացող հերձոնին, Տիգրանի ջառախղին վրայ: Չիբրուզ դափնոտցէն Գարա Օղլուն ու աւագակները կ'արթննան, բայց ալ ոչ է, կարելի չէ ետեւուն հասնիլ:

Երկու օրէն՝ ճամբորդները Սամսուն կը հասնին, եւ անկից է. Պոլիս: Իրենց արկածը արդէն իմացուած է, ու Միս Ռիլըն զիցագնական զոյներով կը պատմէ զայնք Լէվընի Հէրաչտի խմբագիր մը կը ղրկէ Միս Ռիլընի ուրուագիծը շինելու: Բայց մարդը երբ կը տեսնէ միտքնարհուին, «Ա՛հ, կ'ըսէ, մատիտս մոռցեր եմ, երթամ բերեմ», ու մէյ մըն ալ չ'երևնար:

Էրասուրուս Լէվընի Հէրաչտի մեջ յօգուած մը կը գրէ Հայաստանի մէջ տիրող աւագակութեան վրայ, որ մեծ ուշադրութիւն կը գրաւէ Գրական կոչում մը ունի, ու կը զգայ թէ միտինարութիւնը իրեն համար չէ. ուստի ետանգով կ'ընդունի խմբագրի պաշտօն մը որ իրեն կ'առաջարկուի անգլիական թերթին մէջ:

Միս Ռիլըն կը պատրաստուի Ամերիկա դառնալու, ուր բանախօսութիւններ պիտի ընէ Հայաստանի վրայ:

— Խեղճ դժբաղդ ազգ, ա՛տ փորձանքը պակաս էր զխօսուն որ Միս Ռիլըն իր վրայ բանախօսութիւններ ընէ:

Միտինարուհիին աչքը ետին է սակայն:

— Ա՛հ, կ'ըսէ Էրասուրուսի, էթէ Հայաստան գառնաք, փնտոցե՛ք գտե՛ք Պ. Գարա Օղլուն, ու ըսե՛ք որ եթէ ժամանակը գայ որ իր գահը ձեռք ձգէ (ինձի ըսաւ թէ իր նախնիքը Հայաստանի թագաւոր եղած են Զրհկղեղէն առաջ) սիրտս ուրախութենէն պիտի ձխայ: Ա՛հ, մենք անարդար եղանք իրեն նկատմամբ, ու այլպէս ձգելու փախչելու չէինք:

Էրասուրուս ուսերը կը թոթուէ:

Իր եւ Ֆինէլլայի բաժանումը, շողոքնալին վրայ, մեղամաղձութեամբ շեցուն է: Բայց երիտասարդը, մանկամարդ պղկան սիրովը զօրացած, ինքզինքը կարող կը զգայ հիմա իրեն անուն մը շինելու եւ Ֆինէլլային ձեռքը խնդրելու արժանի ըլլալ:

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

(Շարունակելի)

ԱՆԳԼԻՈՅ ՔԱԳՈՒՀԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ Վիկտորիա Թագուհին յունուար 23ին վախճանեցաւ 82 տարեկան: Գահը ելած էր 1837 յունիս 21ին: Անգլիոյ էն երկարակեաց եւ էն երկարատե թագաւորոյ վեհապետը եղաւ: Իրեն յաջորդեց անդրանիկ որդին, որ վաթսուն տարեկան է, Ետուարտ է անունով:

Ամբողջ Անգլիա ոչ միայն պաշտօնապէս այլ և սրտանց սուգի մէջ մտաւ: Ընդհանուր ցաւակցութեան եւ մեծաբանքի արտայայտութեան մասնակցեցան նաև Լոնտոնի հայերը: Տէյնի Նիւզ յունուար 30ի թուով «Հայկական Հոգեհանգիստ մը» վերնագրին տակ, հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ:

«Կիրակի օրը (յունուար 27) Լոնտոնի Հայերը Քիւպրոնի որբանոցին մատուցող համախմբուեցան իրենց վերջին յարգանքը մատուցանելու համար հանգուցեալ վեհապետին: Իրենց քահանան, Տ. Թորոս Իսահակեան, որ այս նպատակաւ յատկապէս Մանչէսթըրէն եկած էր, Սուրբ Պատարագ մատուց ըսա վեհաշուք եւ մեծահանդէս ձեռն Հայաստանեայց Եկեղեցւոյ: Արարողութիւնը լաւ կատարուեցաւ. մատուցողը թեմապետ լեցուն էր երկու սեռէ հայերով որոնցմէ շատը հեռու տեղուանքէ ձկած էին, մասնակցելու համար Պատարագի ատեն երգեր երգուեցան և աղօթքներ ըսուեցան հանգուցեալ թագուհիին հոգուն համար:

«Քարոզը Տ. Թորոս քահանան խօսեցաւ հայերէն չեզուով:»

Անգլիական թերթը այդ քարոզին իմաստը ընդարձակօրէն հրատարակած է: Հայ եկեղեցականը հանգուցեալ թագուհիին բարեպաշտութիւնը, ջերմեանդութիւնը, բարութիւնը դրուատելով, անոր «մարդկօրէն սխալանացը ներում եւ թողութիւն» կը հայցէ ու «երկնաւոր արքայութեան ալ արժանացում»:

Կ. Պոլիս ալ Օրմանեան պատրիարքը ցաւակցութեան այցելութիւն տուած է Անգլիոյ ղեսպանին:

\* \* \*

Այս մահուան առթիւ կը յիշենք թէ 35-40 տարի առաջ Պոլիս—կամ Իզմիր, մտքերնիս լաւ չի գար — հայերէն տետրակ մը հրատարակուեցաւ որուն անունն էր «Անգլիոյ Վիկտորիա Թագուհին Արշակունեաց ցեղէն սերած»: Հեղինակը կը ջանար հրատարակել թէ Անգլիոյ վեհապետուհին Հայաստանի թագաւորութեան մասնադրոյն է: Մտացածին առասպել մը որ օակայն հետաքրքրութեամբ պիտի կարդացուէր այսօր եթէ այդ տետրակը ունեցող մը զայն հրատարակէր:»

Քանի մը շարտթ առաջ Պոլսէն երոպական մասուլիս ծանուցուեցաւ թէ յիսուն հայէ բաղկացած «աւազակախումբ» մը Մուշի թրքաբնակ գեղի մը վրայ յարձակելով երկու մահմետական սպաննած են: Ու այդ դէպքին կը վերագրուէր նոր կոտորածը, առաջնորդներու ձերբակալութիւնը: Այժմ սակայն ուրիշ ստոյգ ազբիւրներ ձիշտ տեղեկութիւններ հասած են: Ինչպէս կը կարծուէր արդէն, այդ նորագոյն լուրերը կը հերքեն ինչ որ թրքական շրջանակներէ տարածուած էր: Ռիւթէրի գործակալութիւնը հետեւեալ կերպով կը հաղորդէ իրողութիւնները:

«Դեկտեմբերի առաջին կիսուն Քիւրտերու Ղուր մը յարձակեցաւ Սասունի Եուշամերկ հայ գեղին վրայ: Գեղին երիտասարդներէն մէկ քանին կրակ ըրին Քիւրտերուն վրայ և անոնցմէ երեքը սպաննեցին: Բայց հայերը զօրեւ զիմադրութիւն չընելով, ձգեցին իրենց տուները և գացին ապաստանեցան մերձակայ լեռները: Քիւրտերը փախստական Հայոցմէն մէկ քանին սպաննեցին, և անոնց գեղը աւարի տալէ ու այլեւ յետոյ անցան մօտակայ Գեղաշէն հայաբնակ գեղը: Այս գեղին բնակիչները առանց սպասելու Քիւրտերու ժամանումին, իրենց արջառը առջնունին ձգելով, ու տուներնին ալ լքանելով, փախան: Քիւրտերը հոս ալ տուները այրելով հեռացան: Թիւրք իշխանութիւնը իբր թէ այս քիւրտ առպատակներուն ետեւէն զօրք զրկեց, բայց մենչեւ վերջին տեւտեկութեանց համեմատ, Քիւրտերը դեռ ձեռք չեն անցուած եղեր:

Րիւթէրի թղթակիցը կը յաւելու նաև հետեւեալը:

«Տէրսիմի Քիւրտերը միշտ իրենց ցեղին էն անհանդարտ և էն անկառավարելի մառը կազմած են: Երբեք թիւրքերուն ամբողջապէս չեն հպատակած, վասն զի հարկ չեն վճարեր, ու կը մերժեն զինուորական ծառայութիւնը: Սակայն կայսերական իրատէ մը անցեալ տարի հրամայեց որ այդ Քիւրտերէն ալ զինուոր աւանդի, և անոնք Համիտիէ գունդին մէջ մտնեն: Քիւրտերը այս որոշումին զիմադրելով, իրենց զէմ զօրք զրկուեցաւ ու ծանր ընդհարումներ տեղի ունեցան: Հիմակ Պոլիս հասած տեղեկութիւնները կը հաւաստեն թէ թիւրք զինուորներէն երեք հարիւր հոգի լեռներուն վրայ կոխներէ կորսուեցան օգոստոսին, սեպտեմբերին, հոկտեմբերին. հետեւաբար Քիւրտերուն զէմ զրկուած խումբը իր նպատակին չէ հասած: Չմոռը հասած ըլլալով թշնամութիւնները սպառեցան, եւ յայտնի չէ թէ զարնան վերսկսուած տեղի պիտի ունենայ թէ ոչ:»

### ԹԻՒՐՔԻՈՅ ՉՈՐՍ ԿՈՂՄԸ

Պազտատի երկաթուղիին շինութեան խնդիրը որ պահ մը մոռցուեցաւ, ահա գարնան մերձեցման հետ կը վերաբացուի, երկու մեծ պետութեանց շահերու ընդհարումի սպառնալիքով:

Բարբի Տեպա օրաթերթը իմացուց թէ երբ մենաշնորհին վերջնական ֆէրմանը տրուի, գերման զինուորներու շոկատներ շինութեան վայրերը պիտի զրկուին հակելու համար ձեռնարկութեան վրայ: Եւ իրաւ ալ տարակոյտ չի կայ թէ երբ այդքան մեծ գրաժառանգութիւն կը դրուի Թիւրքիոյ գործերուն մէջ, ու երոպացի բանուորներ, երկրաչափներ, բազմատեսակ ձեռնարկուններ պիտի լեցուին թրքական հողը, կարելի չէ այդ ամենուն վերին խնամակալութիւնը յանձնել չէրքէզներու, քիւրտներու, և պաշը-պօզուզներու:

Տեպաէն տարածուած այս լուրը որ օտուզութեան ամէն հաւանականութիւն իր մէջ կը կրէ, տակնուվրայ ըրաւ ուստական մամուլը, որուն բողոքներուն տրձագանգը անգլիական մամուլին հետագրուեցաւ: Նովոյե վրէժիա ազգայնամուլ թերթը որ միշտ ամենասերտ յարաբերութեանց մէջ է կառավարական շրջանակներու հետ, բացարձակապէս կը յայտարարէ թէ Ռուսիա չի կրնար թողարկել Փոքր-Ասիոյ գերմանացուներ: Փոքր-Ասիա ուստական նահանգ մը կը նկատուի արգէն: «Ռուսիա իր գանձը, իր արիւնը, իր ուժը ամէնքն ալ Փոքր-Ասիոյ համար զօհեց, կը գոչէ Նովոյե վրէժիա», Ռուսիա Փոքր-Ասիոյ վրայ կը նայի այնպէս ինչպէս Ֆրանսա Ալզաս-Լորէնի վրայ: Ժամանակն է որ Գերմանիոյ ըսենք, ա՛յ հող կեցիր. այդ ուղղութեան մէջ աւելի առաջ պիտի չերթաս:»

Ինչպէս կը տեսնուի, Փոքր-Ասիա թեւ թրքական կայսրութեան մաս կը կազմէ, բայց սակայն թիւրքը աւանդապահ մը կը նկատուի միայն, որ օր մը Գերմանիոյ կամ Ռուսիոյ պիտի յանձնէ ինչ որ իր պահպանութեանը թողուած է առժամաբար: Ինչ պիտի ըսէ սուլթանը իր բարեկամներուն որ զինքը իրենց գերիշխանութեանը ներքեւ առած են ու հրապարակաւ իր պատմութեանին վրայ արգէն վիճակ կը ձգեն:

Ու յետոյ անպահ մըն է այդ Փոքր-Ասիան: Հոն կը բնակին միլիոններով ժողովուրդներ որոնք թրքական վարչութեանն ահեղապէս զժգոհ են բայց եւ այնպէս ոչ գերմանացման ցանկացող են, ոչ աւուսպման, վասն զի ամէնքն ալ կը յուսան որ օր մը չէ օր մը երկիրը ինքնավար բարեկարգութեամբ պիտի օժտուի:

Մենք սակայն անգամ մը եւս ապիթ կօնենանք հա-

ւաստելու թէ Հայ ազգին համար էն մեծ վտանգը գերման կամ օսու ծրագիրներուն մէջ կը կայանայ:

Միևնայն ատեն Ֆրանսացիներն ալ կը զժգոհին Արևելքի մէջ գերման ազգեցութեան հզօրացմանը համար: Բարբիգեան թերթ մը կը հազօրգէ թէ Միջերկրականի Ֆրանսական տորմիզէն նաւարածին մը անմիջապէս Արևելքի շուրհըրը պիտի զրկուի, վասն զի Փոքր-Ասիոյ մէջ ուր որ գերմանները իրենց օտար տեղ մը ըրած են հոն Ֆրանսական ազգեցութիւնը զգալապէս կը տկարանայ:



Սուլթանը սակայն առ այժմ մեծ մտահոգութեան մէջ չ'երևիր Փոքր-Ասիոյ կողմէն. կը թողու որ երկու մեծ պետութիւնները իրենք իրարու հետ ընչ շատ զըռուրտին, ու ինքը իր բոլոր ուշադրութիւնը կը գարձնէ երոպական թիւրքիոյ կողմը ուր կացութիւնը օրէ օր աւելի վտանգաւոր կը դառնայ:

Միևնայն յունուարի վերջ անգլիական մամուլին հասած բոլոր տեղեկութիւնները կ'ամրապնդեն այն երկիւղները թէ յառաջիկայ գարնան երոպական թիւրքիոյ մէջ ծանր դէպքեր կրնան պատահիլ: Մակեդոնական քովթէն թէ հիւսիսային և թէ հարաւային Մակեդոնիոյ մէջ շարունակ կը գործէ, սակայն յեղափոխականները ապստամբական ո եւ է լուրջ նպատակի մը չեն նկատիր: Իրենց բոլոր ջանքն է խոսովութիւններ յարուցանել որպէս զի երոպական միջամտութիւն մը թերեւ հնարաւոր ըլլայ: Սակայն թիւրքիոյ կառավարութիւնը ահեղ պատրաստութիւններ կը տեսնէ պիմազրելու համար թէ յեղափոխական շարժումներուն, թէ երոպական միջամտութեան:

Մակեդոնիոյ տեղական իշխանութիւնները ինչ որ կարող են ընել կ'ընեն որպէս զի Երոպայի մէջ ոչ ոք ստոյգ տեղեկութիւն մը ունենայ իրական կացութեան վրայ: Գրեթէ ամբողջ նահանգը շղթայի ներքեւ առնուած է: Ուր որ դէպք մը պատահի հոն անմիջապէս թիւրք զինուորները պիտի լեցուին: Ամէն միջոց ձեռք առնուած է արիւնի մէջ խղճելու համար Մակեդոնացի քրիստոնեաներու ո եւ է շարժումը:

Քաղաքական ընդհանուր հանգամանքները շատ նըպատաւոր կը թուին սուլթանին: Ինչպէս պարզեցինք նախորդ թուով «Պալքանեան Խոնդիրը» տեսութեան մէջ րումանիա եւ Յունաստան իրենց շահերուն բերմամբ թիւրքիոյ բնական Դաշնակիցները կը համարուին արգէն: Երեք պետութեանց միջեւ յարաբերութիւնները օրէ օր աւելի մտերմական կ'ըլլան: Պոլիս Դուրը Յունաստանի դեօպանին հետ բանակցութեանց ձեռնարկեր է համաձայնութեան մը յանգելու համար ընդգէմ պաշկարական ծրագիրներուն, որոնք եթէ յաջողին, պիտի օտեղծուի Մեծ-Պուլկարիա մը, հաւասարապէս վտան-

գաւոր է թէ՛ Թիւրքիոյ, թէ՛ Յունաստանի, թէ՛ Բուսանիոյ  
և թէ Աւստրիոյ .

Բայց Պուլկարիտ Հանդարտ չկենար, մանաւանդ որ  
իր ետին Ռուսիան կայ: Մուլթանը վասնզին մեծու-  
թիւնը կը կռահէ, եւ արդէն պատերազմական մեծա-  
մեծ պատրաստութեանց ձեռնարկած է: Մակեդոնիա  
լեցուած է թիւրք զօրախումբերով, որոնք ամէն պա-  
տահականութեան համար կազմ եւ պատրաստ են: Մի-  
անգամայն Գերմանիա մեծաքանակ ռազմավթերը ապրս-  
պրուած են: Կացութիւնը հետեւաբար շատ տագնապա-  
լից կ'երևի:

\* \* \*

Եւ այս կացութենէն դարձեալ կրետէն է որ պիտի  
օգտուի քայլ մը եւս առնելու համար դէպի միութիւն մայր  
Հայրենիքի հետ:


Պետութեանց Բարձր Քոմիսէրը, Եօրկիոս Իշխանը  
այս տարի մեծ պետութեանց զիմեց այս միութեան գոր-  
ծին յաջողութեամբ համար, բայց իր առաջարկները ըն-  
դունելուիւն չգտան, վասն զի զիւանագիտութիւնը կը  
խորշի իր առջեւ դարձեալ կնճոռտ հարց մը ունենա-  
լէ: Եւ սրովհետեւ Եօրկիոսի պաշտօնավարութեան քառ-  
ամեայ շրջանը կը լրանայ այս տարի, ու ինքն ալ իբր  
պատասխան իրեն առաջարկներուն եղած մերժումին,  
յայտարարած է որ այլ եւս պիտի չուզէ երկրորդ շրջա-  
նի մը համար պաշտօնավարել: Եւ ահա զիւանագիտու-  
թեան համար նորէն դժուարութիւն մը կ'ստեղծուի:

Այժմ կը մտաբերուի նոր կարգադրութեամբ մը գո-  
հացնել կրետէն ալ, Յունաստանն ալ, առանց սուլթանը  
խրաչեցնելու: Կը մտաբերուի կրետէի մէջ կարգապա-  
հութեան հսկող օտարազգի զինուորներուն տեղ յոյն  
զօրք դնել: Այս խորհուրդին իրականացմամբ Եօրկիոս  
Իշխանն ալ պիտի յօժարի չորս տարուան նոր շրջանի  
մը համար կրկին պաշտօնավարել:

Կը թուի թէ սուլթանը այսնոր ծրագրին պիտի չ'ընդ-  
դիմանայ, վասն զի Յունաստանի հետ սերտ բարեկամ  
մնալու իղձը ունի:

Եւ այդպէս կրետէ իրեն կառավարիչ ունենալով Յու-  
նաստանի թաղաւորին զաւակը, իրեն պահապան ունե-  
նալով յոյն զինուորը, արդէն հելլենացած կրնայ համար-  
ուիլ: Միութեան հռչակումը ժամանակի խնդիր է, եւ  
հաւանօրէն Պալքանեան խնդիրներուն կարգադրութենէն  
ետքը տեղի կ'ունենայ

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԻՒՐԲԻՈՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ



Ռոտտոթոյէն Եւրոպա հաղորդուած հետեւեալ իրո-  
ղութիւնները կը հաւաստեն թէ Եւրոպայի աչքին առջեւ  
իսկ քրիստոնեաները բաղդակից են Ասիոյ քրիստոնեա-  
ներուն:

Ահա ինչ որ կը գրուի:

«Եւրոպական Թիւրքիոյ քրիստոնեայ ժողովուրդն  
ալ Թիւրքիւն ու Մուհամմէրի միացեալ ծանրաբեռն լու-  
ծին ներքե տակալու ա'լ անկարող է: Եթէ Հայաստան  
Քիւրտը ունի մենք ալ Մուհամմէրը ունինք: Պուլկարաց-  
եալ նահանգներէն մահմետական գաղթականները, ո-  
րոնք Մուհամմէր կը կոչուին, իրենց դաշնակից ունենա-  
լով կառավարական պաշտօնեաները, ինչքան կրնան կը  
կողոպտեն ժողովուրդը և ամէն անիրաւութիւն ի գործ  
կը դնեն:

Ինչպէս միշտ, նոյնպէս եւ վերջերս ալ նորէն մու-  
համմէր ընտանիքներ Ռոտտոթոյ հասան: Ուրիշ մահմե-  
տականներու պէս ասոնք ալ Թիւրքիա գալով պուլկա-  
րական օրէնքներու խտութենէն ճողոպտիլ կուզէին:  
Եկած էին տկար. ամէնքը միասին հազիւ թէ մէկ կամ  
երկու զոյգ եզ կը բերէին հետերին: Բայց Աւետեաց  
երկիրը կը հաւտային մտնել. հոն ամէն ինչ իրենց հա-  
մար կազմ եւ պատրաստ պիտի գտնէիդ: Հասնելով  
Ռոտտոթոյ, շիփշիտակ կառավարական պաշտօնատունը  
գացին եւ պահանջեցին իրենց տուն եւ արտ հոգալ:  
Իսկ մերժումի պարագային պիտի միանային արդէն հոս  
գետեղուած մուհամմէրներուն, քաղաքը աւարի տալ: Ռո-  
տտոթոյի կառավարութիւնը տակն ու վրայ եղաւ: Պուլքէն  
խիտ հրաման հասած է հոս մէկ քրիստոնէի քիթը իսկ  
չարինել: Ինչ պէտք էր ընել: Այս իարցումին պատաս-  
խանը տալ դժուար չէր: Կառավարիչը երկու պաշտօն-  
եայ, իսմայիլ եւ Բեզա էֆէնտիները անմիջապէս տաս-  
երկու զինուորի ընկերակցութեամբ եւ մուհամմէրներն  
ալ մէկտեղ քաղքէն երեք ժամ հեռու զրկեց Սէմէկլի  
ըսուած յունական գեղը, որ Ղանուս լեռանց ստորտը  
բլրակի մը վրայ կառուցուած է, եւ որուն 600 տուն բը-  
նակիչները ամէնքն ալ յոյն են:

Կառավարական անպատասխամբը Սէմէկլի հասնելուն  
պէս, գեղացիները հրաւիրուեցան ամէն մէկը իրենց հո-  
պէն բաժին մը հանել մուհամմէրներուն: Թիւրք պաշ-  
տօնեաները իրենք որոշեցին տրուելիք արտավարին  
տարածութիւնը: Յոյները այս յափշտակութենէն զայրա-  
ցած, յաջորդ օրը պատգամաւորութիւն մը զրկեցին Ռո-

տութայ, բողոքելու համար թէ ինչ իրաւունքով հողերնին ձեռքերնուն կը խլուի: Բայց ոչ ոք իրենց ականջ կախեց:

Թիւրք պաշտօնեաները հետերնին գործաւոր տարած էին, եւ յաջողեցան քանի մը օրուան մէջ անոնց բնակարան կառուցանել:

Կը կարծուէր թէ մուհաճիւնները ալ գոհ պիտի մնային: Բայց արտերը ձեռքո՞քին չէին կրնար հերկել, եղ պէտք էր. ուստի նորէն Ռոտտօթոյ գալով պահանջեցին իրենց եղ ալ հայթայթել: Կառավարութիւնը շատ մտատանջութեան մէջ չինկաւ: Նորէն պաշտօնեաներ զըրկեց յունական գեղը ու յանձնարարեց որ իւրաքանչիւր մուհաճիւրի տան մէջ մէկ եղ նուիրեն, իբր զրացնական պարտականութիւն: Եւ եթէ իրենց հաճութեամբը այս նուէրը չընէին, ան ասան իբր հարկ պիտի ադնուէր իրենցմէ, մէկին տեղ երկուք:

Ալ չափը լեցուած էր. յայնքը ելան գացին մուհաճիւրներուն, խնդրեցին որ ձգեն հեռանան: Մահմետականները բնաւ տրամադիր չերեցան տեղերնէն շարժելու, եւ սկսան խնդալ յոյներուն վրայ, զանոնք ապուշ կեանք ան նուանելով: Բայց խնդալնին շատ շտեկեց: Իրիկուն մը գեղին յոյները մօտ հազար հօգիի չափ մէկտեղ հաւաքուելով կը յարձակին նորաչէն թիւրք գեղին վրայ և հիմնայատակ կը զարձեն ամբողջ գեղը: Մուհաճիւրները զիջերանց շունչերնին Ռոտտօթոյ կ'անեն: Աստուծոն Ռոտտօթոյ լուր տարածուած էր թէ Յոյները կ'ապստամբին: Իսկոյն Էտիրնէ հեռագրուեցաւ, եւ երկու վաշտ զինուոր Ռոտտօթոյ հասնելով, անոնցմէ մէկը Սէմէկի զրկուեցաւ, միւսն ալ իբր պահեստ հոս վար գրուեցաւ:

Սէմէկի յոյները զիւրաւ անձնատուր եղան, իրենցմէ երեսուն հօգի Էտիրնէ զրկուեցան զինուորական ասեանին առջեւ դատուելու իսկ վաթսուն հօգի ալ Ռոտտօթոյ բանտարկուեցան: Արօնք քանի մը օր վերջը ազատ արձակուեցան հիւպատոսներու միջնորդութեամբ, բայց պայմանաւ որ իրենց իրենց ծախքովը պիտի շինեն քանդած տուներնին, եւ մուհաճիւրներուն ալ փոխանակ մէկ մէկ եղի երկուքական պիտի տան:

Էրիկ մարդիկներուն բանտարկութեան միջոցին զինւորներն ալ առիթն օգտուեցան թրքական հանրածանօթ բարբարոսութեան սխրագործութիւններով արին արցունքի մէջ թուղուլ անտէր անտիրական գեղացի կիները:

ԼՈՒՐԵՐ

**ՊԱՏՐԻՍՐԲԸ ԲԱՆՏԱՊԵՏ. Կ.** Պոլսէն անգլիական բերքերուն հետեւեալը կը հաղորդեն:

«Մոռի առաջնորդ Բարկէն վարդապետ Թիւրքերուն ու Քիւրտերուն կողմէ պատրաստուած կոտորածի մը համար բողոքած եւ ուղարկուած երեսօտիքի հրատարակուած լուրով, իբր խոտվարար Պոլիս բերուեցաւ ուստիկանական հսկողութեամբ: Յիշեալ եկեղեցականը հիմակ բանտարկուած կը մնայ Բերայի Թաքսիմ քաղը Օրմանեան պատրիարքին անձնական բնակարանին մէջ:»

**ՐՍՄՍԶՈՆԻ ՍԻԶՈԳՈՆԳ. Կ.** Պոլսէն «Տէյի Թեյերաֆ»-ին կը հաղորդեն հետեւեալ դէպքը որ մահմետականներու բարքերը նկարագրող պերճախօս իրողութիւն մըն է:

«Այս քամագանին, կը գրէ Լուտոնի բերքին քրքակիցը, հայ մը թրամուռիին մէջ, ոչ ուսմանական մըն ալ կար, սիկատ կը ծխէր: Մահմետականը քեզ շատ նեղացած էր որ «կեանք» քամագանին իր առջեւ սիկատ կը քաշէ, բայց չէր կրնար ո' եւ է քան մը ընել: Սակայն երբ հայը սիկատ վերջացուց, ու ծայրն ալ գետին նետելով վրան կոխեց որ մարտ, մահմետականը տեղէն ելաւ ու Հայուն վրայ յարձակելով չարաչար ծեծեց գայն, պոռալով քի սոսորակին անարգանք ըրած է: Ու իր այս անկերք զրպարտութիւնը կը բացատրէր այն իրողութեամբ որ հայը սիկատին վրայ կոխած էր. «ւրդ, սիկատին այդ ծայրին վրայ քրքական զինանշան մը կայ եղեր, իբր Մարքա, եւ միշտ գայն իր ոտքին տակ կոխըտելով նախատած է սոսորակը եւ մահմետականութիւնը:» Ու զարմանալիք որ անդին Մատանի յեռներն ու Մուռի դաշտերը միևնոյն մահմետականները հայը կը կոտորեն:

**ՔՐԴԱԿԱՆ** չորս ասպատակութեանց զէմ Ռոտտօթոյն ուղարկած ըլլալով, սոսորակը հրամայած է Էրզրում ատուան մը կազմել քննութեան համար:

ՀԱՍՏԷ ԵՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին և 15 ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 ալար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին շրկել տո՛

L. FRANK,  
27, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W